

Hentchak:

Organe Central  
DU PARTI

HENTCHAKISTE.

# Հ Ն Չ Ա Ն Կ

Journal Arménien

mensuel

XIX Année

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ԷՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ԱԻԵԼԻ ԼԱԻ Է ՈՒԾ, ՔԱՆ ԵՐԻԷՔ

Փարիզ հասնելէս ի վեր սրտի գոհունակութեամբ կարգացի քանի մը թերթերու մէջ թէ՛ անհատներու, թէ՛ խմբագիրներու կողմանէ հրատարակուող գրուած և թէ՛ առանձին ինձ հասած բազմաթիւ նամակներ—որոնցմով՝ կուսակցութեանց մէջ միութիւն կամ համերաշխութիւն յառաջացնելու համար՝ ազնիւ ընկերներ և բարեկամներ ինձի թելադրութիւններ կրնն և ցանկութիւններով յոյսեր կը տածեն իմ վրայ այդ մասին:

Որքան ալ թէ շատ կանուխէն պարտականութիւն զգացի, անմիջապէս իւրաքանչիւրին առանձին առանձին պատասխանելով՝ արձագանք և գոհացում տալ իրենց փափագանոց, և սակայն սիշելով անցելոյն մէջ եղած հապճեպ միութեանց անօգտակարութիւնը, ես ինձի թոյլ առի թիչ մ'ես համբերելու և սպասելու, ըսելով, «աւելի լաւ է ուշ քան երբէք»:

Ընդունուած իրողութիւն և ճշմարտութիւն մ'է, որ քաղաքական կուսակցութիւնները ազգի մը կամ ժողովրդի մը յառաջադիմութեան ազգակներն են եղած, բայց տխուր իրականութիւնն այն է, որ այժմ մեր մէջ՝ կուսակցական անուան տակ եղած պայքարը աւելի եսական, թշնամական եղած է, քան թէ՛ դադափարական և, զժբաղդաբար, կուսակցականները, թիչ բացառութեամբ, կուսակցամոլներ դառնալով՝ զործը հեռզհեռէ ծայրայեղութեան և դատապարտելի եղբայրասպանութեան աստիճանին հասցուցած են:

Չեմ կարող հաւատար, թէ ըլլայ մէկը, որ բռնակալի լծի ծանրութիւնը թիչ թէ շատ ըզպացած լինի ու միութեան կամ համերաշխութեան օգուտը ժխտէ:

Չբսեմ ամենը, այլ շատերը կսպասեն այս

կենսական հարցին յաջող կէք մը արուելուն, սակայն պէտք է զիանայ, որ զործը այն ժամանակ զիւրացած և համարեա թէ վերջացած կլինի, երբ իւրաքանչիւրս իր կարգին կաշխատի, զործնական, նախնական քայլերը առնել, — այսինքն՝ ամէն մէկը իր պատկանած կուսակցութեանը, դանուած շրջանակին կամ միջավայրին մէջ՝ կը ջանայ մարել արդէն արծարծուած թշնամական, վռէժիւնդրական ու եսական կիրքերը, վերջ տալով քինականութեան ու բամբասանքին:

Ամէնքս ալ անյիշաչար լինելով՝ պէտք է աշխատինք անրիժ ու մաքուր սրտով մօտենալ իրարու և եղբայրական ձեռք երկնցունել փոխադարձ:

Իսկ վերջնական քայլը պաշտօնական ձեւակերպութիւնները կմնայ կուսակցութեանց վարիչ մարմիններուն, որոնք՝ կարծեմ, այլևս զբացած ու հաւազուած պէտք է լինին, թէ ժամանակը չէ յանցանքը մէկը միւսին վրայ ձգելու և հին հաշիւներ մաքրելու, այլ անհրաժեշտ է ժողովրդի ձայնը և անոր արդարացի պահանջները լսելու, քանի որ հասած ենք այնպիսի ժամանակի մը, որ խիստ վճռական է: Մենք պէտք է որ մեր թշնամիներուն զիմազրաւելու և Գործի պահանջին բաւականութիւն տալու չափ ոյժ և միջոցներ ունենանք:

Մէկ տեղ զարիզմը իր սուր ձանկերը խրած է մեր սրտին մէջ և մեր վրայ է արձակած իւր սև հարիւրակները, կօզակները և անզիտակից թաթարները: Միւս տեղ հայ արեան ծարաւի Սուլթանն է, որ անպատիժ կը ծածաննցնէ իր հայաջինջ զրօշը մեր վրայ՝ բայց թողնելով իր զօրքերը, բաշխօգուքները, համիզիէները, քիւրզերը, չէրքեղները, և իր բոլոր խաւարային ոյժերը . . .

Արդ՝ թիչ թէ շատ իւր մէջ յեղափոխական զգացում կրող մարդը, աչքի առած ունենալով հայրենիքի այս սրտամուկիկ ու աղիխարջ վիճակը և մօտէն զիտակից ու ցաւակից լինելով անոր անտանելի վշտերուն, չէ կարող անտարբեր մնալ. մա-

նաւանդ այսպիսի ժամանակ մը, երբ ոչ ոք դիտէ թէ վաղը քաղաքական կացութիւնը ինչ խառնափնթոր վիճակ կստանայ և ինչ անսպասելի պատահարներ ու պատեհութիւններ կը ծագին ու կրնան ծագել, որոնցմէ պէտք է դիտանք օգտուիլ: Աւ երբ մահամերձ բռնաւորին օրինական ու արդարինի ժառանգորդներն ու անոնց պաշտպան կողմնակիցներն իսկ արդէն սկսած են իրենց գլխի ճարը նայիլ և միջոցներ խորհել, որպէսզի վաղը օտքի տակ չերթան, հասցա՛ մե՛նք որչափ աւելի պէտք ունինք խորհելու և արթուն գտնուելու, մե՛նք, որ թէ՛ աշխարհագրական դիրքերով, թէ՛ գերարհալածող կազմակերպութիւններով ու ուղղութիւններով և թէ՛ նիւթական ու բարոյական արկար ոյժերով բաժանուած ու ցրուած կը գտնուինք, անհասարար ոյժերու դէմ:

Վ. աղուայ ծագելիք խառնաշփոթութեանց մէջ մեր գոյաթեանը սպառնացող ահեղ վտանգը, որ կարող է լինել աւելի վատ քան զառաջինը, և որոյ մասին մտածելն իսկ մարդուս սոսկում կազդէ, աչքի առաջ ունենալով, պարտք կզգամ դիմում ընել հայ ժողովրդեան միահամուռ Յեղափոխական Գործին փնտրելու և խնդրել կուսակցութեանց վարիչ մարմիններէն, որպէսզի մեր ցրուած ոյժերը ընդհանուր թշնամոյն դէմ համերաշխելու կամ միացնելու գաղափարին զարկ տան և աշխատին իրականացնել այդ:

Աւ որպէս զի այդ ցանկալի գաղափարը օր առաջ մարմին ստանայ, կրկին ու կրկին կը խնդրեմ, որ հայ յեղափոխական կուսակցութեանց վարիչ մարմինները միջոցներ ձեռք առնեն կազմելու Հայ Յեղափոխական Գ. օ ն գ ռ է ս մը, որուն մասնակցին անխտիր հայ ժողովրդեան մէջ գործող բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչները:

ՄՈՒՐԱՏ

Պ Ա Շ Տ Օ Ն Ե Վ Ա Ն

Հնչական կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը սեղաբուծելով քննարկում եւ համաձայն է, որ ըստ կարելոյն փութով գումարով «ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԿՕՆԳՐԵՍ»-գալիք քաղաքական անհրաժեշտութիւններն միահամուռ շարքերով գիւմարելու համար:

Կեդրոնական վարչութիւնս գտնում է ընկեր ՄՈՒՐԱՏԻ առաջարկը բոլորովին նպատակ-այարմար և ժամանակակից:

Լիայոյս ենք որ մեզ կուսակցութիւններն էլ իրենց քարեհամ համաձայնութիւնը կայտանն և «ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԿՕՆԳՐԵՍ»-ը կայանաւորցնեն, ի հարկին, նախաձեռնութիւն կատարելով թիւրքիայի մէջ գործող քաղաքական բոլոր կուսակցութիւններէն մի ընդհանուր ԿՕՆԳՐԵՍ գումարելու:

ՀՆՉԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԿԵՂՈՐՈՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԳԱԼԻՔԻՆ ՀԱՆԴԵՊ

Արեւուն տարի կայ, որ թուրք բռնապետութիւնը, ազգայնամոռների ղեկավարութեամբ, բացարձակ կերպով իշխում է ամբողջ Տաճկաստանում՝ իրեն նպատակ ունենալով այդ երկիրը խմորել, կաղապարել իր ցանկութիւններին, իր միտումներին համաձայն:

Աթէ երբ և իցէ մի բռնակալութիւն իրեն աղբիւր է նկատել տուել ամէն օրէնքի և իշխանութեան ու գտել է զինուորական, դատարանական ամէն կարգի գործիք-հաստատութիւններ այդ մտքերին մարմին տալու. եթէ երբ և իցէ քաղաքական մի ծայրայեղ կեդրոնական իշխանութիւն ամէն ձիգ թափել է տեղական, ինքնուրոյն ամէն կեանք սպանել և հպատակութիւնը, կոյր հնազանդութիւնը ընդհանուր կամբ, խիղճ և արարկետող նշանաբան դարձնել, — դա եղել է և է՛ տաճկական ներկայ բռնակալութիւնը:

Աթէ երբ և իցէ մի բռնապետ ջանք է թափել իր երկրի մէջ եղող ազգութիւններին և ցեղերին իրարու դէմ հանել, նրանց բոլորին ակնյայանի, կազմակերպուած կողոպուտի, թալանի ենթարկել և ստրկութիւնը, թշուառութիւնը, աղքատութիւնը ամէնքի էլ բաժինը դարձնել. եթէ մի թագակիր ոճրագործ մտածմունք է ունեցել ամէն շունչ և հողի զանգուածի մի կտոր նկատել և իրենեց զժգոհին, իրեն չհնազանդողին ուղղակի սպանդանոց և կառափնատեղի բաշել — դա եղել է և է՛ Սուլթան Համիդը՝ ազգայնամոռների այդ հարազատ ներկայացուցիչը:

Բայց այդ բոլորը արդեօք դրական, շօշափելի մի արդիւնքի հասցրին ահրող ազգայնական կուսակցութեանը ընդհանրապէս և նրա գաղափարները մարմնացնող Համիդին՝ մասնաւորապէս: Վատարուած բոլոր աղէտներէց, եղած բոլոր փորձերէց յետոյ, ազգայնական կուսակցութիւնը իր արարկետութիւնը մշանջենաւորեց: Համիդը սուլթանական գահը և սուլթանականութիւնը ընդ միշտապահօվեց:

— Արբէք:

Արեւելեան Խնդրով շահագրգռուող մեծ պետութիւններին իրարու դէմ զրգռել, նրանց շահերի, ձգտումների հակամարտութիւններից օգտուել, — դա եղած է թրքական արտաքին քաղաքականութեան գարեօր մի լծակը: Գիղուած խնդիրների առաջ սպասողական դիրք բռնել, միշտ ջանալ ժամանակ վաստակել, յապաղումը, անգործու-

նէութիւնը իրեն է՛ն մեծ զօրավիզը նկատել, — այդ բոլորը կատարուեցան այս երեսուն տարուայ ընթացքում ամենամեծ չափերով: Բայց հեռանա՞նք, յարատեութիւն յառաջացնող արդի՞նք:

— Աւ ո՛չ մի:

Թուրք բռնապետութեան ներկայի նեցուկը հանդիսացող ազգայնական կուսակցութիւնը կատարելապէս պարտութիւն կրեց, բացայայտ անյաջողութեան բաղխեց, թէ իր ներքին և թէ իր արտաքին քաղաքականութեան մէջ: Աս ո՛չ միայն ո՛չ մի խնդիր վճռել չկարողացաւ, եղած ո՛չ մի բարգուծութիւն չլուծեց, այլ իրերի դրութիւնը է՛լ աւելի վատթարացրեց, եղած դժուարութիւնները է՛լ աւելի գառնացրեց ու այս երեսուն տարին թրքական կայսրութեան համար անօգուտ դարձրեց, — աւելին՝ նա ամբողջ երկիրը տակն ու վրայ արեց և մահուան դուռը հասցրեց աւելի արագ, քան դուրէ՛ սպասելի էր: Թիւրքիան, որպէս տէրութիւն, այս երեսուն տարուայ ընթացքում ոչինչ, բացարձակապէս ոչինչ չշահեց. ընդհակառակը նա կորցրեց, և շատ կորցրեց: Աս այժմ՝ գտնուում է հոգեվարքային մի վիճակի մէջ, երբ իր բախառ անպատճառ պիտի վճռուի այս կամ այն կերպով:

Բայց այդպէս էլ պէտք է լինէր:

Աթէ բռնապետութիւնը տեսողութեան կողմից կոյր է, մաքի կողմից էլ քարացած, մածուցուած է, — այդպիսի հաստատութիւններ մեռնում են, դա ճակատագրական է, և բնաշրջանին անհրաժեշտութիւն:

Թուրք ինքնակայութիւնը արտադրեց գինուորներ, զօրավարներ, նա երևան չբերեց կազմակերպիչներ, վարչադէտներ, քաղաքագէտներ, — այս բառիս իսկական և ընդարձակ նշանակութեամբ:

Թուրք ժողովուրդը անընդունակ գտնուեց արտադրել բուն ժողովրդական հոսանքներ, չճնեց, չյառաջացրեց հ եր ո ս ն ե թ, որ վերիններից աղաքութեան շանթը խլէին և վարիններին տային:

Տիրող կուրութեան, խաւարի, աղքատութեան, ընդհանուր քայքայումի մէջ ազգայնական կուսակցութիւնը ինչո՞վ էր ուզում Պահլաբ ամուր պահել և եղածը անփոփոխ շարունակել տալ: — Կեղբոնացընել Թիւրքիան, նրա գանազան մասերի ղեկավարութիւնը մի ընդհանուր լծի տակ առնել և ալլասեռ տարրերից յառաջացնել մի առարկութիւն: — Պաղատար, միտք, որ դործադրուել էր այլուր, բայց Թիւրքիայի մէջ պետական

մարդ չկար, որ նկատէր թէ այդ մաքի իրագործումը նրան աւելի մահ կբերէր, քան ապահովութիւն և ամրապնդութիւն:

Այդ, երեսուն տարի անցնելուց յետոյ՝ հրով և սրով օսմանց իացման զաղափարի իրագործման ձգտումը նպաստեց, յառաջ բերեց օտարասեռ տարրերի միութիւնը, ձուլումը կամ համերաշխութիւնը: Համիդական հեծելազունդի միջոցով քուրդերը իր երազած կողակները դարձա՞ն: Արաբներով քրդերին զսպել, քրդերով՝ հայերին, ալբանացիներով՝ բոլորին, դրանով իր ո՞ր ձրգտումը իրագործեց և նպաստաւոր հետևանք յառաջացրեց՝ իր ընդգրկած նպատակների տեսակէտից: — Աւ ո՛չ մէկ:

Ազգայնական կուսակցութիւնը կրկնեց սերնդերի սխալները, փոխանակ կորովամտութիւն ունենալու նրանցից խոյս տալու: Իսկ այդ կարելի էր անել՝ եթէ երկիրը և նրա մէջ ամփոփուած ժողովրդներին իրապէս ճանաչող և նրանց կարիքներից տեղեկութիւն ունեցող մի ճշմարիտ քաղաքական կուսակցութիւն առաջ եկած լինէր՝ լայն մաքրում առգործած:

Այդ կուսակցութեան քաղաքականութեամբ հայր «Ֆէսատ» նկատուեց, նրա հայրենիքը պերզմանատուն վերածուելու փորձուեց. լուսինն իսկ իր շեջանառութեան օրից չէր տեսել այնպիսի ահռելի ոճիրների պատկերներ, որոնք դործուեցան մեր հայրենիքի մէջ ու դրանով, այս երեսուն երկար տարիները անցնելուց յետոյ, Թիւրքիան, որպէս պետութիւն, ապահովուեց: Բոլորովին հակառակը չեղա՞ւ:

Աւելիքում դեռ կրօնը իր հնօրեայ տիրապետութեան մէջն է, նա ամենազօրաւոր միջոցներից մէկն է մարդկանց իրարու հետ կապելու և դիւրութեամբ շահագործել տալու: Թուրք ազգայնականութիւնը աշխատեց օգտուել այդ զուպանակից, ջանաց նրա միջոցով ամբողջ մահմետական աշխարհը սերտ կերպով օսմանեան կայսրութեան հետ կապել մի ընդհանուր նպատակի համար, — բայց երեսուն տարուայ անընդհատ փորձը մի արդիւնքի հասցրեց, միւս երկիրները մի կողմ թողած, մահմետականութեան հայրենիքը եզող Արաբիան է՛սկ մարտի թատերաբեմը դուրս գալով չապտակեց Թուրք ազգայնամուլ կուսակցութեան երեսին:

Անյաջողութիւն, սխալ, աղէտ, կործանում ամէն բանի մէջ: Աւ այդ բոլորը նրա համար, որ օսմանեան պետութիւնը չունեցաւ, չարտադրեց մի

մ ա ռ Կ ՚ խ ե ի թ լ զ լ ի ն ի, ի ր ե թ ի զ ր ու թ ի ն ը ր ու զ ի զ  
 ը մ բ ը ն ո զ, ո ռ կ ա ռ ո զ լ ի ն է թ ան ե լ ա յ ն  
 ի ն չ ո ռ պ է ա թ է թ ան ե թ :

Եւ այդպիսի մտքով չունենալով, այդպիսի  
 մեկը ստեղծել չկարողանալով, նա մինչև վերջ մնաց  
 նախկին կողմը, նախկին քարացած ուղեղը, որին  
 միայն մահը, կատարեալ մահը կարող է ուղղել:  
 Թուրք թէ՛ պետական մարմինը և թէ՛ ժողո-  
 վուրը այդ կողմից ամուլ գանուեց մինչև վերջ:

«Մեզնից յետոյ ջրհեղեղ» — այս է եղած  
 բոլոր բռնապետների վարուեցողութեան տիրապե-  
 տող զիծը: Բայց թուրք ազգայնականութեան  
 ներկայացուցիչ Համիդը այդ դազափարը իր ա-  
 մենավայրագ կիրառութեանը հասցրեց: — Սպանել  
 կեանք, եթէ նա իրեն հակառակ է, թող տալ կեանք,  
 եթէ նա կուզէ սարկութեան մէջ պարաւանդ-  
 ուիլ, և Համիդը այն ճիւղը եղաւ, որ այդ  
 որոշումը գործադրելու ամենաուժեղ ազգայնները  
 խաղի մէջ զրեց: Ու ազգայնականները այդ պա-  
 րագային ո՛չ միայն նրա մեղսակիցները, գործադը-  
 րող ոյժերը հանդիսացան, այլ ներշնչողները, դաս-  
 տիարակները, ղեկավարները:

Այդ ամէնը եղան, այդ բոլոր ոճիրները կա-  
 տարուեցան, բայց որոշեալ, դրական, յարատեւող  
 մի արդիւնք դուրս եկաւ: — Երեսուն տարուայ  
 կեանքը ասում է որ՝ ո՛չ:

Կարելի էր եւրոպայի առաջ քծնիլ, նրա ներ-  
 հակութիւնները շահագործել, բայց ի՞նչ դնով —  
 Թիւրքեան լայն բանալով նոյն այդ եւրոպացու  
 առաջ: Ու ազգային կուսակցութիւնը այդպէս  
 էլ արաւ: Թիւրքեան այսօր քան երբ և է  
 անուանապէս միայն անկախ է, անտեսապէս այդ  
 երկիրը արդէն անցած է նրանց ձեռքը, որոնց  
 հակամարտ շահերից, որպէս թէ, ինքը պիտի  
 օգտուէր Բռնապետութիւնը շարունակել տալու և  
 բողոքող ժողովրդների ձայնը խեղդելու: Շահա-  
 գրգռողներին կոնցեսսիաների (զիջողութիւնների)  
 մի մի կտոր նետելով՝ կարելի էր հայերին արեան  
 մէջ լողացնել և մեր բերանը յաւիտենականապէս  
 վակել: — Բայց եղաւ:

Որ կողմը որ շրջուելու լինի՝ ազգայնական կու-  
 սակցութիւնը անհամար փաստեր ունի համոզ-  
 ուելու, թէ ինքը իր առաջադրած և ո՛չ մէկ  
 նպատակին կարողացաւ հասնել: Իսկ այդպէս  
 եղաւ, սրովհետեւ թէ՛ իր մտածմունքի հիմունքներն  
 էին սխալ և թէ՛ իր գործադրած մէթոտները:  
 Երեսուն տարի դըրուելուց յետոյ՝ երարան-

ցումի նոր ցնցումներ՝ նոյն իսկ չսպասւած տեղե-  
 լից: — Կա սպասելի չէր ազգայնականների համար:

«Սուլթանը մեռնում է», չորս կողմից  
 աղաղակում են, մի տեսակ աչքալուսանք տալու  
 ձևով: — Սուլթանի, մարդկային այդ վատ տիպի  
 վերացման մտասպատկերը ամէն մարդի, անշուշտ,  
 չէ կարող հոգեկան հրձուանք չսպասածաւել, բայց մենք  
 այդ դալիք մահուան հեռանկարի վրայ բոլորովին  
 այլ աչքով ենք նայում, — այդտեղ չի մեռնում անձը՝  
 Սուլթանը, այլ սխտէմը, սուլթանիզմը: Երե-  
 սուն տարուայ կեանքը այդ հաստատում է: Սուլ-  
 թան Համիդը ներկայացնում էր պատմական  
 մի ամբողջ հոսանք, նա մարմնացնում էր Թիւրք-  
 քիայի բոլոր հին ոյժերը, և նա արեց այն ինչոր  
 այդպիսի ոյժեր կարող էին անել: Իսկ այդ ոյ-  
 ժերը, միայն Սուլթան Համիդի օրօք, երեսուն  
 տարի շարունակ գործելուց յետոյ, այսօր ուժասպառ  
 մեռնում են, մնացած ամէն ինչ գառնում  
 է ժամանակի, լոկ ժամանակի խնդիր: Կարող է  
 նոյն իսկ մէկ Սուլթանի մի ուրիշը փոխանորդել, բայց  
 զբանով իրերը չեն փոխուիլ, — այն՝ որ սուլթա-  
 նիզմը իր վերջին երգը երգել է Թիւրքիայում:

Ապացոյց:

— Նոյն ինքն դեռ մինչև երէկ բոլորովին մեռած,  
 լծացած կարծուած թուրք, բուն օսմանիլ ժողովուր-  
 դը: Երեսուն տարի շարունակ՝ ճակատագրի  
 հպատակողի ամէն համբերութեամբ, սուլթանա-  
 կան ըէժիմի բոլոր քմահաճոյքները և նրա հա-  
 կամարգկային ամէն թելադրութիւնները կատարել,  
 տանելուց յետոյ, այսօր նա փորձում է ծառանալ,  
 բողոքել, ականատես է իր քայքայիանը, ազքատու-  
 թեանը, թշուառութեանը և զղում է: Թէև դեռ աղօս  
 կերպով, որ այդ բոլորի աղբիւրը, իրական պատճառը  
 ո՛չ թէ ղեկավարի, հայի Ֆէստատութեան մէջ պիտի  
 որսնել, այլ ս ու լ թ ա ն ի զ մ ի, սրա ս տ ե զ ծ ա գ ո ռ -  
 ծ ա ծ ք ա զ ա թ ա կ ա ն և անտեսական կազմի:  
 Տարերային յուզում, տարերային պեկոճութեան,  
 դեռ անկազմ, անկերպարան, — համաձայն, — բայց  
 այդ էր ազգայնականների նպատակը, ձգտումը: Իր  
 ցանկութիւններին բոլորովին հակառակը դուրս  
 չեկաւ, երբ այդ խաւտը զանգուածին ուզում էր  
 շարժականութեան մէջ գնել մասնաւորապէս մեզ  
 դէմ: Իսկ Եթաբը, Ալբանացի՞ն, նոյն իսկ քի՞րդը՝  
 միթէ՞ սրանք առաջուանն են մնացել, սրանք էլ  
 զարթնումի նշաններ չե՞ն ցոյց տալիս, — թող այդ  
 լինի սաղմնային: Ազգայնականները այդտեղ էլ  
 պարտուեցա՞ն թէ ո՛չ:

Ազգայնական կուսակցութիւնը ձգտեց եւրոպական պետութիւնների մէջ կուսակիւններ ձգել՝ ներքին իւրաքանչիւրին ամէն տեսակ կոնգեսսիաներ խոստանալով և տալով : Իր նպատակը չէ՞ր յապաղում առաջ բերել, յետաձգել, թոյլ չտալ որ ընդհանուր համերաշխութիւն չկայանար նրանց մէջ եր ներքին խնդիրների նկատմամբ : Բայց այդ ձգտումը իրական օգուտ բերեց, այնքան վնասներ տալուց, թիւրքիան դրաւի դնելուց յետոյ :

Եւրոպական պետութիւններից և ո՛չ մէկը իր դարեւոր ծրագրերից ձեռք վեր առեց, նրանք այսօր այն են, ինչոր էին շատ տարիներ, դարեր իսկ առաջ, այն տարբերութեամբ միայն՝ որ այսօր աւելի մեծ չափով իրենց մազիլները խրած ունին թիւրքիայի, որպէս պետութեան, սրտի մէջ, նրան իրենց ամբողջ ուժովը սեղմելով :

Եւրոպական և ո՛չ մէկ պետութիւն այսօր թիւրքիայի անկեղծ բարեկամն է, որքան որ մի պետութիւն միւսին կարող է բարեկամ լինել : Իր ամենից հաւատարիմ կարծուած բարեկամը՝ Պետրոսիան անգամ ամէն թողէ կարող է առևտուրի մէջ մտնել և իրեն ծախել, ինչպէս արել է շատ անգամ :

Թիւրքիան այսօր դրիւռել է 18-րդ և 19-րդ դարու առաջի կէսին թատերաբեմի վրայ եղող Անգղիայից և Ֆրանսիայից իսկ :

Իսկ մտածել թէ իր մթերած զինուորական ոյժը այժմ քան երբ և է կարող է վերջակէտ դնել, թու՞մք լինել այն բոլոր հոսանքների, որոնք պիտի դան դարկուելու թիւրքիայի խարխուլ պարիսպներիին — դա աւելի քան միամտութիւն պիտի լինէր : Այո՛, մեռնում է Սուլթանը, բայց նրա օրօք էլ մեռնում է և՛ սուլթանից՝ ամբողջ հին թիւրքիան :

Անշուշտ գեռ կան բեկորներ, որոնք կուզեն իրերի նախկին գրութիւնը շարունակել, և մենք հեռու ենք կարծելուց թէ Համիդի մեռնելուց յետոյ կյառաջանան թրքական ժողովրդական ոյժեր, որոնք իրարու կը բազխեն և թիւրքիայի մէջ կսկսուի հինի և նորի պատերազմը զինու զօրութեամբ : Այդպիսի մի բան դժուար սպասելի է ներկայումս, ժամանակակից թիւրքիայի մէջ՝ թուրք տարրերի կողմից :

Այնտեղ, առ առաւելն, կարող են լինել պալատական դաւադրութիւններ, պետական հարուածներ, բայց ամէն ինչ կը գառնայ ա ն ձ եր ի շուրջ, և միայն այդքան : Տիրող օլիգարխիայի միջից ոմանք կուզենան օսմանեան հին կառքի մէջ նստել և այնպէս իրենց ճանապարհը շարունակել, ոմանք

էլ կցանկանան այդ կառքը մի փոքր վերանորոգել ու այնպէս երթալ, բայց դարձեալ հին ուղիովը : Այդպէս կլինի, ոյսպէս ասած, պաշտօնական թիւրքիան : Բայց իրականութիւնը դարձեալ կմնայ նոյնը իր հրատարական պահանջով — այն՝ որ հին թիւրքիան մեռնում է՝ փոթ չէ թէ նրա նիւթակուն մաշը մի փոքր էլ ուշանայ : Ու այնուհետեւ գալիս է սպասնական, ամէն ինչ յեղաշրջող այն հարցը թէ արդեօք նոր թիւրքիա առաջ կգա՞յ, կստեղծուի՞ մի նորադոյն իրականութիւնը պետութիւն :

Արդ՛հետեւ այդ մասին ամէն խօսք կարող է լինել միայն ենթադրական, ուստի պատասխանը առ այժմս մի կողմ թողնելով՝ սենք միայն այն, որ Սուլթան Համիդի մահուան բազէն ներկայանում է մի բարեխաջող հանգամանք օգտուելու նրանց, որոնք ուզո՞ւ են նոր թիւրքիա ստեղծել :

Այժէ, իրաւ, թուրք երիտասարդութիւնը նրա պայքարող մասը անկեղծ է և ուզում է նոր թիւրքիա ունենալ, պէտք է բառից անցնի գործի և գործքով այդ ցոյց տայ : Նա գործունէութեան ուրիշ ուղու միջոց չունի, եթէ ո՛չ զէնք, սպասածութիւն, յեղափոխութիւն : Մնացած ամէն միջոց միայն խաբուսիկ կարող է լինել և գէժագօքների վեր բարձրացման սարգուստի աստիճաններ : Բայց նա կանենոյ՞ այդ ընդունակութիւնը և հասունութիւնը : Անձի փոփոխութիւնը և խոստումները նրան բաւականութիւն չէ՞ն տալ, միջև որ ինքն էլ տիրապետող կառքի մէջ նստի և տաք սնկիւն գրուի . . .

Հարցի այդ մասը մի կողմ թողնելով՝ անցնենք դէպի մեզ :

Այստեղ խնդիրը աւելի որոշ և շոշափելի ձև է ստանում մեր տեսակէտից :

Ամենքի համար որոշ պէտք է լինի այն, որ մեր կուսակցութեան համար գոյութիւն չունի ամբողջ թիւրքիայի խնդիր, այլ միայն Հայկական Խնդիր :

Մենք ծրագիր չունենք ամբողջ թիւրքիան արմատապէս վերանորոգելու և նրա ամբողջականութիւնը պահպանելու, — այլ միայն մեր հայրենիքը, Հայաստանի այն մասը՝ որ գտնուում է թուրք պետութեան լծի տակ :

Մենք ո՛չ պատմական իրուումք և ո՛չ էլ ունենում ենք միասիւս ու մանպատ ունինք գործելու, խօսելու յանուն այն բոլոր ժողովրդների, որոնք գտնուում են թիւրքիայի սահմանների մէջ. մենք խօսել, գործել ենք, ու այդպէս պիտի անենք, միայն Տաճկա-Հայաստանի մէջ եղող հայ ժողովրդի անունով :

Եւ երբ, որպէս սօցիալիստներ, մենք պահանջում ենք միայն մեր հայրենիքի՝ Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող արտագրութեան և փոխանակութեան միջոցների ընկերականացումը, — գրանսով մենք դուրս չենք վտարում և բացառիկ դրութեան մէջ չենք դնում այն տարասեւ ժողովրդներին, որոնք մեր հայրենիքի տարածութեան վրայ են գտնուում :

Ու եթէ մենք գանկանում ենք ձեռք բերել աշխատանքի միահիծանութիւն, ինչպէս և քաղաքա-

կան, — Հայաստանի մէջ — դա միայն հայ ժողովրդի համար չի լինիլ, այլ բոլորին:

Իսկ թէ ինչու մենք ցանկացել և ցանկանում ենք մեր հայրենիքի ճակատագիրը բաժանել թուրք կայսրութեան ճակատագրից, ինչու մենք մեզ իշխուներ ենք տրուել խօսելու միայն հայ ժողովրդի անունով և մեր քաղաքական ու տնտեսական ծրագիրը ձգտել ենք իրականացնել՝ յենուելով միայն հայ ժողովրդի գերազանցօրէն աշխատուոր դասակարգի վրան, առանց մեր սօցիալիստական գաղափարներին դաւաճանելու, — թուրք կայսրութեան պատմութիւնն այնտեղ է հաստատուելու համար որ մենք այլապէս չէինք ևչինք կարող աւել, քան այն՝ ինչ որ արել և անում ենք: Թիւրքիան ճանաչող և նրա մէջ գտնուող ամէն սօցիալիստական կազմակերպութիւն մերինից տարբեր ընթացք չէր կարող ունենալ, — մի ընթացք՝ որի դէմ դատապարտութեան խօսք չէ ունեցել ասելու, մինչև ցարդ, ո՛ր և է լրջախոհ սօցիալիստ:

Թիւրքիան մի ընդհանրական հայրենիք չէ, այլ նա տարբեր հայրենիքների մի կոյտ մի ազգլուծերատ (համախլուծմն) է: Իսկ մենք մեր հայրենիքի, պատմական անհատականութիւնը պահելու, ունենալու լիակատար իրաւունքը ունինք, ինչպէս որ նոյնը անում են բոլոր երկրների սօցիալիստական կազմակերպութիւնները, ի բաց առեալ սօցիալիստ. անարխիստները:

Թիւրքիան իրենից չի ներկայացնում մի ժողովուրդ, այլ ժողովուրդներ, որոնցից ամէն մէկը ունի իր շեշտուած և ուրոյն անհատականութիւնը. որին չի կարելի ջնջել. ընդհակառակը՝ նրանց ամէն միջոց պիտի տալ փթթելու, զարգանալու:

Եւ եթէ մենք յենում ենք միայն մեր հայրենիքի մէջ եղող հայ աշխատուոր զանգուածի վրան և ո՛չ թէ բոլոր ազգերի աշխատուորների միասին, — դա արդէն անոգորելի իրականութեան անհրաժեշտ դարձրած մի պահանջն է — աչքի առաջ ունենալով միւս այլասեռ տարրերի աշխատուոր դասակարգերի նիւթական և բարոյական կացութիւնը, նրանց կենցաղավարութիւնը և զարգացման աստիճանը:

Թէև մենք ո՛չ մի ջանք, ո՛չ մի աշխատանք մինչև ցարդ չենք խնայած Հայաստանի մէջ եղող բոլոր ժողովրդներին և մասնաւորապէս նրանց աշխատուորներին միատեղ բերելու և սուլթանական բռնակալութեան դէմ կանգնեցնելու, բայց, խոստովանում ենք, 19-ը տարուայ մեր անընդհատ ջանքերը այդ կողմից եթէ ոչ բոլորովն ապարդիւն, գէթ շատ քիչ արդիւնքի են հասցրել: Իսկ մենք հայ ժողովրդի գոյութեան և մահուան խնդիրը չէինք կարող կախում դարձնել բոլոր տարրերի մի համախլուծման տաքտիկայից — տաքտիկա, որ նոյն իսկ չէ ընդունուած Թիւրքիայից շատ աւելի զարգացած բաղկացուցիչ մասեր ունեցող պետութիւնների մէջ, — այդպիսի մի տաքտիկա ո՛չ միայն անօգուտ մի ջանք եղած կլինէր, այլ մենք թող տուած կլինէինք, որ հայը ջնջուէր անձայն: Եւ այժմ եթէ կան օսմանեան կայսրութեան

մէջ քաղաքական ուրիշ կազմակերպութիւններ, որոնք կողմնին գործել յանուն ամբողջ Թիւրքիայի, յանուն Թիւրքիայի մէջ եղող բոլոր ժողովրդների, մենք ո՛չ միայն հակառակ չենք, այլ կողջունենք նրանց ապարդէլ դալը, եթէ միայն նրանք նպատակ կունենան բոլոր ժողովրդների պատմական և անհատական իրաւունքների յարգանքը, ինչպէս և դասակարգերի ջնջուելու ու արտադրութեան միջոցների բոլորին սեպահականացումը. ուրիշ խօսքով՝ երբ նրանք գործել կողմն սօցիալիստական հոգի վրայ:

Թիւրքիայի մէջ բովանդակուած՝ նուաճուող, տաւապող ժողովրդների վիճակի փոփոխութեան և բարւոքման համար մինչև ցարդ ուրիշ սիստէմ չէ վրանրուած՝ բացի անջատման և ինքնավարութեան: Մինչև այժմս դարւորման՝ այդ հիմնական եղանակն է միայն գործել և որոշեալ արդիւնքներ էլ տուել . . .

Իսկապէս թուրք տարրին և նրա պայքարող մասին կմնայ Թիւրքիայի միութեան, ամբողջութեան պահպանման և նրա մէջ պարփակուած ժողովրդների ինքնորոշման և միահեծանութեան գաղափարների հաշտեցման համար նոր եղանակներ և հիմունքներ գտնել, — ինչոր դժուար չէ: Երբ-Աւստրիա ցանկացող ձախ սգոյն տարրերը իրենց օրինակի Բայց այս պարագային խօսքը, բառը նշանակութիւն չունի, հարկաւոր է գործ, իրողութիւն, որպէսզի ընդհանուր վստահութիւն յառաջանայ:

Իսկ մենք չենք կարող մեր արդէն ունեցածը կորցնել և երեւակայականի, դեռ չսաղմնաւորուածի յեռակից ընկնել, — ո՛չ, դա մի անբուելի ոճիր կլինէր դէպի հայ ժողովուրդը և նրա դատը, որի համար այնքան առատ արիւն է թափուել և այնքան թանկագին կեանքեր են զոհուել: Պատմութեան անիւր, իրերի հոսանքը մի օրուայ մէջ շուռ տալ չի կարելի, ամէն եղելութեան համար նախ պէտք է լինեն ազգակներ: Բոպէի ցնցումները վողանցուկ մերձեցումներ, յիւսուրետտի համբոյններ՝ կարող են բերել, բայց այդ կերպով քաղաքական և տնտեսական այրող և հիմնական խնդիրներ չեն վճուուել: Այդպիսի ծանր հետեանք ունեցող խնդիրների մէջ ամէն ինչ պարզ և որոշ պիտի լինի, ամէն տարր, ամէն կուսակցութիւն էլ մերկապարանոց՝ իր դիրքի և հետապնդած սկզբունքների տեսակէտից:

Այժմս ո՛չ աշխարհակալութեան իրաւունք կայ, ո՛չ էլ կամքի հակառակ ալուստական կապեր կամ զանազան կասկածելի բնուորութիւն կրող բաղկացութիւններ, երկու անհատների, ինչպէս և ժողովրդների, փոխադարձ յարաբնութիւնները պիտի հաստատուին անբռնաբարելի կամքի, ինքնիշխանութեան վրայ, — իսկ դա կյառաջանայ միայն այն ժամանակ, երբ երկու կողմի էական շահերի մէջ փխադարձ ներդաշնակութիւն կտիրի:

Եւ այսպէս, մեզ հետաքրքրողը սուլթանական անձի մահը չէ, այլ նրա ըէփմը, — քաղաքական ու

տնտեսական այն կազմը, որ սնունդ և գոյութիւն է տալիս սուլթանականութեան:

»Սուլթան Համիդը մեռնում է՝ — այդ աչքալուսանքին ի պատասխան Բուլղարիան իր ամբողջութեամբ և ցոյց տալիս՝ ներկայացած հանգամանքից օգտուելու և իր անկախութիւնը հռչակելու:

Մակեդոնական մարտախմբերը պատրաստ են իրենց յեղափոխական դրօշը պարզելու և վճռական կռուի մէջ մտնելու:

Սերբիան, Մոնթենեգրոն, Յունաստանը... ամէնքը մի մի բաժնի վրայ աչք դրած՝ երկայն սլեր ունին՝ ցանկացած պատառը խլելու:

Աւստրո-Հունգարիան հանդէս չի գալ իր արեւելեան շահերը ապահովելու և՛ ընդ կիսայ Իտալիան, Իսկ Ռուսիան, նոյն իսկ զուսածութեան, ուշադրութիւնը ներսից գէպի դուրսը դարձնելու համար՝ անտարբեր կկենայ այդ բոլորին: — Ընդհանուր կացութեան մէջ կայուն ո՛չինչ, բացարձակապէս ոչինչ չկայ. ներկայումս ամէն ինչ քանդուելու և եղանելու վիճակի մէջ է, Կոստանտնուպոլսի և Արևելեան գործերի մէջ:

Բայց երեսուն տարի շարունակ արեան մէջ լողացող հայ ժողովուրդը՝ նա՛ ինչ պիտի ունենայ ասելիք, — բա՛ն, խօ՛սք թէ գործ:

Ներկայումս է պատմական մի շրջագարձ. բոլոր պատասխանատու է և բարեպատեհ: Որքան որ քայքայուած, թալանուած, մոխրակոյտի վրայ նստած լինենք, որքան որ մեր ոյժերը ջլատուած և անհասարակ լինեն, այնուամենայնիւ մի վերջին ճիշ պիտի արձակել... Երբ պարտականութիւն կատարելու հոգեբանական վայրկեանը հնչի, սմէն ինչ աչքի առաջ պիտի առնել... Օրեր, ժամեր կան, որ դարերի նշանակութիւն ունին:

Երբ կգայ փոթորկի օրը, մենք՝ Հնչակեաններս ո՛չ մեր իրաւունքի և ո՛չ էլ մեր պարտականութեան մէջ կթերանանք: Մենք կաննք այն, ինչոր հանգամանքները, մեր դիրքը և Հայկական Գատի շահը կթելագրէ:

**ՄԵՆԲ ԵՒ ՄԵՐ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ**

»Թիւրքիայում գործող հայ կուսակցութիւնները, ուրեմն և Հնչակեանութիւնը, աւելի վնասում են հայ ժողովրդի ազատագրութեան գործին, դժուարացնում այսպէս ասած՝ Հայկական Գատը, քան թէ իրապէս նրան աջակցում, նրա լուծմանը նպաստում՝ որպէս քաղաքական կուսակցութիւններ»:

— Այսպէս են ատում, մօտաւորապէս, մեր քննադատներից նրանք, որոնք իրենց իրաւունք են տալիս խօսելու սօցիալիստական գիտութեան անունով, թէ և այդ գիտութիւնից հաղիւ իւրացրած լինէին մի քանի աղօտ տեղեկութիւններ՝ քաղաքացիական պայքարի միջոցով, այն էլ ոչ միշտ յանձնարարելի: Իսկ թէ այդպիսիները երբ և է հետաքրքրուել են Արևելեան Խնդրի

պատմութեամբը ընդհանրապէս, տաճկահայ կեանքով և Հայկական Խնդրով մասնաւորապէս, — այդ մասին հարկ անգամ չկայ հարցնելու: Նրանց ամբողջ տեղեկութիւնները հիմնուած են լսովի խօսքերի, օտար հեղինակների և գործիչների ասած ու խօսածների վրայ, քան թէ անմիջական արդիւնք և հետևանք են անձնական հետազոտութիւնների ու տեղեկութիւնների: Գեւ բաւական չէ որ մեր այդ քննադատների եթէ ոչ ամբողջութիւնը՝ գէթ ջախջախիչ մեծամասնութիւնը ո՛չ Տաճկահայաստան են ճանաչում և ո՛չ էլ նրա մէջ ամփոփուած ժողովուրդների փոխադարձ յարաբերութիւնները, նրանց նիւթական և քաղաքական պայմանները. բաւական չէ որ նրանք որոշ տեղեկութիւններ չունեն թիւրքիայի բազմազան և ազգութիւնների վիճակից և նրանց ձգտումներից, այլ նրանց մէջ կան շատերը, որ նոյն իսկ հայերէն չգիտեն, հետևապէս միանգամից անընդունակ և անկարող են անմիջական յարաբերութեան մէջ մտնելու այն ժողովուրդի հետ, որի անունով և որի համար նրանք ուզում են խօսել լուր կամ վատ:

Մեր այս կորգի քննադատները սւելի առաջ գնալով՝ յանգում են այն դրական եղբակացութեան, — մի եղբակացութիւն՝ որ առաջ է գալիս իրենց սերտօվի նախադասութիւնների շարքից, — թէ «Տաճկահայաստանում գործող կուսակցութիւնները իրենց ծրագրի մէջ միայն Հայկական Խնդիր դնելով՝ միայն հայերի և նրանց քաղաքական ու տնտեսական պահանջների մասին խօսելով, նրանք այդ Գատին տալիս են զուտ ազգայնական գոյն, — մի հանգամանք, որ ատելութեան, չուղղացութեան, վրձնադրութեան պատճառ և առիթ է տալիս Թիւրքիայի մէջ եղող միւս ազգաբնակչութիւններին և ցեղերին, ուստի այդ առթիւ էլ վերջիններս միանում են սուլթանի և ինչպէս պատկանող ոյժերի հետ և միատեղ դէմ կանգնում Հայկական Գատի լուծուելուն»: — Նոյն իսկ Հայկական կուսարածի մասնաւոր պատճառներից մէկն էլ այդ են համարում մեր քննադատները: »Ինչո՞ւ թուրքը չէ կոտորում քուրդին, արաբին, ալբանացուն և միայն հային է այդ անուամբ պատճառն այն է՞, պատասխանում են, որ հայերը՝ նրանց արտայայտիչ կուսակցութիւնները Հայկական Գատը կղզիացրել են և փոխանակ միայն Հայկական Գատի անունով խօսելու, պէտք է խօսէին Թիւրքիայի մէջ գոյութիւն ունեցող բոլոր ժողովուրդների անունով, առանց ցեղի և լեզուի խտրութեան»: Իւր քննադատական այս խօսքերը մէջտեղ գրչորելուց յետոյ, նրանք առաջարկում են այսուհետև, գէթ, խօսել ո՛չ թէ միայն Տաճկահայաստանի, այլ ամբողջ Տաճկաստանի անունով, ո՛չ թէ միայն հայի, այլ բոլոր ազգերի կողմից: Ու այդ ուղղութեամբ առաջ դրնալով՝ խորհուրդ են տալիս ջանալ իրարու հետ միացնել Թիւրքիայի մէջ գտնուող բոլոր ժողովուրդներին, կամ սրանց դժգոհ տարբերին, և հրապարակ գալ որպէս ամփոփիչ բոլորի իղձերի ու կոյն մղել սուլթանի դէմ և այդպիսով ձեռք բերել մի բեժիմ:

ուր կողք կողքի ապրել կարողանային բոլոր ազգերը հաւասարապէս:

—Որ արտայայտուած այդ մտքերի մէջ, սխալ հայեցակէտերի հետ միասին, կան և՛ թէօրիական ճշմարտութիւններ, ուղիղ դատողութիւնների մի շարք հիւսուածքներ— դրանց մասին կասկած անգամ չի կարող լինել: Բայց մեր այդ կարգի քննադատները մոռանում են մի խոշոր իրողութիւն,— այն՝ որ իրենց այսօրուայ ասած-խօսածների այն մասը, որ ուղիղ ենք գտնում, մեր ո՛չ միայն վաղուց անտի քարոզած, խօսած, գրութեան նիւթ ենք դարձրած, այլ նրանց համար, յաճախ, մեր կաշին, մեր կեանքը իսկ վտանգի ենք ենթարկած: Այն ինչոր իրենք ex cathedra այսօր են յայտարարում սրպէս նորութիւն, որպէս տեսական ճշմարտութիւններ,— մեր գեռ շատ առաջ ո՛չ միայն գործունէութեան առարկայ ենք արած, այլ աշխատած ենք կիրառութեան մէջ իսկ մտնել: Հետեւաբար բոլորովին աւելորդ ջանք է մեզ յետ դարձնել մեր գրած-խօսածները՝ էն էլ շատ երկար տարիներից յետոյ: Գրա փոխարէն աւելի լաւ պիտի լինէր, որ իրենք ծանօթանային հայ յեղափոխութեան պատմութեանը և թղթատէին մեր նորագոյն ժամանակների գրականութիւնը: Գիտենք որ պէզանտիզմը նորեկներից անբաժան մի ախտ է, որից բուժուելու համար ժամանակի և փորձառութեան կարիք կայ, բայց այդ բանը մեր գլխին չէ, որ կտրել պիտի աշխատեն, նրանք կարող են իրենց այդ ապրանքները ծախել այնտեղ, ուր դեռ սպառողներ կան:

Առաջիններից թէև տարբեր տեսակետներով և տարբեր նպատակների համար, բայց գրեթէ համանման փաստերով և դատողութիւններով առաջ են գալիս և՛ «Ներիտասարգ թուրքերը»: Սրանք էլ՝ համարեա թէ՛ նոյն եզրակացութեան են գալիս, ինչ որ առաջինները, բայց մի փոքր ուրիշ կերպ մտածումների հիւսուածք մէջտեղ գլորելով: «Ներիտասարգ թուրքերը» էլ սկզբունքով սխալ են համարում հայ կուսակցութիւնների ուրոյն, առանձին դիրքը և գոյութիւնը, նրանք էլ զայրանում են որ այդ կուսակցութիւնները չեն միանում իրենց հետ և մի ամբողջութիւն կազմում՝ յանուն թիւրքիայի մէջ ամփոփուող բոլոր ժողովրդների խօսելու: — Այդպէս չանելով՝ աւելացրելով են մեր այս կարգի կրիտիկոսները, հայ կուսակցութիւնները թէ՛ իրենց և թէ՛ հայ ժողովրդի դէմ են գրգռում մնացած միւս ազգութիւններին և նրանց պայքարողներին ու այդպիսով վտանգում են թէ՛ իրենց պաշտպանած Գատը և թէ՛ օսման հան պետութեան ամբողջութիւնը: Պէտք է բարենորոգումներ պահանջել ո՛չ թէ միայն երկրի մի մասի, օրինակ Տաճկա-Հայաստանի, այլ ամբողջ թիւրքիայի համար: Միայն հայերը չեն ճնշուողները, այլ Տաճկաստանի մէջ եղած բոլոր ազգութիւնները և ցեղերը, ուրեմն պայքարել ո՛չ թէ միայն հայերի, այլ բոլորի ամբողջութեան համար: Ինչո՞ւ համար չաշխատել թիւրքիայի մէջ առաջ բերել այնպիսի մի րէժիմ, որ

կողք կողքի ապրէին, հաւասար իրաւունքներով և պարտականութեամբ, բոլոր տարրերը միասին: Ինչո՞ւ համար օսման հան ամբողջ ազգութեան անունով չը խօսել, այլ խօսել նրա մէկ մասի՝ հայի անունով: Այդպէս չանելով՝ հայ կուսակցութիւնները ո՛չ միայն շօշափելի մի օգուտ չեն ասլիս իրենց ժողովրդին, որի անունով և որի համար խօսում են, այլ նրան բոլորովին վնասում: — Սրանք են այն խօսքերը . . . որոնցմով շարունակ, անիրաւաբար, դատախիտում են թիւրք «Ներիտասարգները» հայ «Ներիտասարգները» ին:

Հայ կուսակցութիւնները, ուրեմն և Հնչակեանութիւնը, զուտ ազգայնական են, բացառանքում են հաւասարապէս թէ՛ սօցիալիզմի անունով խօսող մի կարգ պէզանտ գլուխներ և թէ՛ «Ներիտասարգ թուրքեր»: Եւ, որ գլխաւորն է, մեր այն հիմնական տաքտիկան թէ պէտք է ձգտել հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագիրը միանգամից դատել թրքական կայսրութեան ճակատագրից և ձեռք բերել անկախութիւն՝ — դա արդէն տապալող փոստն է դառնում մեր հակառակորդների ձեռքին, ապացոյցանելու համար թէ մեր զուտ ազգայնականներ, մարուր և անվիճելի նացիօնալիստներ ենք: Իսկ դա մի հանգամանք է, որ մեր դէմ պիտի բարձրացնէր թէ՛ ճշմարիտ սօցիալիստին և թէ՛ թիւրքիայի այլ տարրերին . . . : Ու այդպէս էլ աշխատում են անել մեր հակառակորդները, նրանք այդ ուղղութեամբ էլ գործում, քարոզում են, ի հարկէ միշտ բազասական քան դրական մի գործ կատարելով:

Աճապարում ենք այստեղ մի տարբերութիւն գնել մեր այս երկու կարգի քննադատների միջև: Որքան որ առաջինները յաւակնոտ տգէտներ են, որոնց չի կարող օգնել սօցիալիզմ՝ բառի տեղի-անտեղի կրկնութիւնը. նոյնքան էլ երկրորդները գիտակից, որոշ կանխամտածուած միջոցով առաջնորդուող մարդիկներ են, մարդիկ՝ որոնք գիտեն որոշապէս իրենց ասած-խօսածների նպատակը և իրենց ուր երթալը:

Այնքանը խնդիրներին: Այազմակերպական սիստէմ — Կեր քննադատները մի առանձին եռանդով մասնանշում են այն փաստը, որ մեր յեղափոխական կազմակերպութիւններ ենք անում միայն հայերի մէջ և ո՛չ թէ հաճկաստանի և Հայաստանի մէջ մեզ հետ կողք կողքի ապրող օտարազգի բոլոր տարրերի մէջ էլ — որով, որպէս թէ, մեր պաշտպանած Գատին տալիս ենք զուտ ազգայնական գոյն և, ուրեմն, մեր արարքը հետեանք է ազգայնական նեղ մտածմունքի, բացառիկ շահերի ի վնաս միւսներին:

Կախ աքենք այն, որ կազմակերպական այն ձևը, որ մեր ընդունել ենք Հայաստանում, արդիւնք է մի ընդհանրական սիստէմի, որ գրեթէ առանց բացառութեան գործադրում է պանգամ բաղկացուցիչ տարրեր բովանդակող բոլոր երկրների յեղափոխական կազմակերպութիւնների կողմից: Հետեւաբար այդտեղ ազգայնութեան, ոչ-ազգայնութեան, սօցիալիզմի կամ դէ-

մօկրատիզմի խօսք լինել չի կարող: Աղածը մի սխտեմ է, կազմակերպական մի ձև, որ առաջանում է սեղանական պայմաններից:

Եթէ Աւստրիայում գործող սօցիալիստական կազմակերպութիւնները կազմական այդ ձևն են ընդունած և ուսականը՝ ո՛չ գրանով չի կարելի փաստել թէ առաջին երկրում գործող սօցիալ-դեմօկրատները շեղուի են գիտական հոգից, իսկ երկրորդները՝ ո՛չ պայմական ձևերը հետևանք են տեղական անվերածելի պայմանների, իսկ այդ պայմանները ամեն տեղ համանման չեն, նոյնութիւն չեն կազմում:

Ամեն ժողովուրդ քաղաքակրթութեան միևնոյն աստիճանի վրան չի գտնուում. պատմական անցեալը ամեն տեղ համանման պայմաններ չի յառաջացրել, հետևաբար անցեալից մնացած դիզուած խնդիրներ կան, որոնք չեն կարող վճռուել բիւրօկրատային հրամանագրութիւններով, կամ անհատական, կուսակցական ցանկութիւններով, եթէ նրանք համապատասխան չեն իրականութեան: Ե՛ն՝ ինչոր անհատականի է Գրանսիայում, ոչ մի յն հասկանալի, այլ բոլորովին անհրաժեշտ է մի այլ տեղում, օրինակ Աւստրիայում, Հայաստանում:

Ո՛չ միայն սօցիալիստական, այլ հասարակ յառաջադիմական, դեմօկրատական կազմակերպութիւնների ուրոյն ձև ունենալն անգամ միտք չունի Գրանսիայում: այնտեղ ամեն ինչ կախումն պիտի ունենայ տարբերող հիմնական սկզբունքներից: Երօլետարական, դեմօկրատական Գրանսիան ամեն տեղ նոյնութիւն է կազմում թէ լեզուի և թէ պատմական անհատականութեան կողմից: Ուրիշ է սակայն Աւստրիայում, այստեղ իրաւ է, Բոհեմիայի, Խորուաիայի, Կարինիայի, Կարինիայի Կարնիօլի, Գիւլիի պրօվինցիաները բոլորն էլ պրօլետարներ են, բայց նրանք իրարու չեն հասկանում, չունին լեզուի համայնութիւն, ունին պատմական ուրոյն անհատականութիւն, որ այլևս անվերածելի է, ուստի և կազմակերպութեան այլ ձև, քան ինչ որ Գրանսիայումն էր: Թէև սկզբունքներով, շահերով և նոյն, բայց նրանց մէջ լեզուի, պատմական առանձնայատկութեան մի պարիսպ կայ, որին չի կարելի վանց անել, ուստի ըստ այնմ էլ կազմակերպական եղանակ պէտք էր ընդունել: Ու այդպէս էլ եղած է, այնտեղ սօցիալիստական կազմակերպութիւնները, ինչպէս և դեմօկրատական, միաստե՛ս, միաստորը, ըստ ազգութեան են եղած: Իսկ կազմակերպական այդ եղանակը Աւստրիայում արդէն տուել է այնպիսի շօշափելի արդիւնքներ, որոնց չի կարելի բացատրել: Բարեկարգիչ Բէօստից, Շմելլինդից ըսկասած մինչև սօցիալ-դեմօկրատ Անդլերը կազմակերպական այդ ձևն են ընդունած. իսկ դա մի ձև էր, որ հրամայական և անհրաժեշտ էին դարձրել իրականութիւնը, տեղական կեանքի պայմանները:

Վերամանական սօցիալ-դեմօկրատիան անգամ ուրոյն, առանձին, միաստե՛ս, ըստ ազգութեան կազմակերպութեան ձևն ընդունեց միացեալ Վերամանիայի մասը կազմող լեհական երկրների համար: Ուստի սօցիալ-դեմօկրատիան, լինելով աւելի ան-

համբերող և բիւրօկրատական, ընդունել է ամեն ինչ մաղկուռ, հարկելու և մի յայտարարի վերածելու սխտեմը: Կա տեսական այն հոգի վրան է կանգնած, որ ամբողջ Ռուսիան արդէն միտարրութիւն է կազմում և նրա մէջ պատմական անհատականութիւններ չկան, այդտեղից էլ նրա կազմակերպական եղանակի միօրինակութիւնը, և հէնց դրանով էլ բացատրում է ուստի սօցիալ-դեմօկրատիայի թոյլ, անյարակից կողերը և նրա անդամների մէջ տիրող գաղափարական խառնեմաղանջութիւնը և անգիտակցութիւնը Վր հայրենական գիւղում սուսերէն մի բառ անգամ չլինացող հայ գիւղացին Բագուի մէջ կողք կողքի պիտի նստի և թէօրիական կենսական հարցեր պիտի վճռի ուրսի կամ վրացու հետ՝ ուսուսերէն լեզուով կամ թարգմանի միջոցով:

Այլ այսպէս, կազմակերպական սխտեմը անհրաժեշտ յայտարար նշան չէ կարող լինել մէկի սօցիալիստ, միւսի ազգայնական լինելուն:

Մենք Հայաստանի մէջ կազմակերպական ուրոյն, առանձին, ըստ ազգութեան սխտեմն ենք ընդունել նոյն այն շարժառիթներով, ինչոր աւստրիական, գերմանական սօցիալ-դեմօկրատները: Բացի դրանից կայ մի այլ գերակշիւ խնդիր, որ յառաջանում է զուտ տեղական պայմաններից—գա Հայաստանի մէջ գտնուող ժողովուրդների կուլտուրական զարգացման աստիճանի տարբերութիւնն է: Հայը նոյն կուլտուրական զարգացումը չունի, ինչոր քիւրդը, չիքքեզը, աւշարը, նոյն իսկ փրայպետող օսմանլին,—խարութիւնը աչքառու է: Թուրքը, չիքքեզը, քիւրդը . . . որքան որ շատ արիշ նման կացութիւն էլ ունենան հայի հետ, քաղաքականապէս ու անտեսապէս,—էական մի տարբերութիւն կայ, այն՝ որ նրանք ամբողջական բնաջնջումի տակ չեն գտնուում, ինչպէս որ հայերը, թուրք կառավարութիւնը նրանց սպառելու, որպէս ժողովուրդ, ներքին քաղաքականութիւն չունի:

» Հայկական հարցը լուծելու համար հարկաւոր է հայերին ջնջել « — » Ցաւրոսեան լեւնաշլիթայի ծոցում պարփակել մի այն միւսլիման տարրեր « — դաւակլեան այս սուրը կախուած չի եղել բացի հայից՝ Հայաստանի մէջ եղած ուրիշ տարրերի գլխին:

Իսկ հոգեբանական տարրերը, միմէ՞ սրանք որ և է դեր և ազդեցութիւն չունեն:— քիւրդը, չիքքեզը, աւշարը, օսմանլին . . . կարճը են, հասած են զարգացման այն աստիճանին, որ իրենցից թօթափեն կրօնական - բարոյական, անցեալից ժառանգութիւն մնացած ամեն շղթայ ամեն ազգակ որ գան հայի հետ խորհրդակցին, դաւադրե՛ն մի միւսլիման կառավարութեան և նրա պետի դրած օրէքների դէմ, — մի պետ, որի խօսքը ինքն և իր նախահայրերը պատուիրանի տեղ են ընդունում: Միանալ Գեափուրի հետ իր ցեղային գերակշռութիւնը, իր իսկ գործած պատմական անարդարութիւնները վերացնելու համար, — դա ներկայումս եթէ ո՛չ բացարձակ անկարելի գէթ անյաղձելիութեան աստիճանի դժուար է:

Կազմակերպական տեսակէտից առ առաւելն, կարելի է միայն օգտուել այն հաստնեքից, էն է ո-

րոշ նպատակի համար, որոշ պայմաններում և միայն այդքան:

Ուրիշ է, սակայն, ձգտել համերաշխական կապեր հաստատելը (Հայաստանի, ինչպէս և ամբողջ Ցածկաստանի մէջ գտնուող օտարասեռ տարրերի հետ: Սակ այդ ուղղութեամբ շնչակեանութեան ո՛չ մի խօսք կարելի է ասել: Մեր գրականութիւնը այդ նկատմամբ ճոխ և հարուստ է: Հետաքրքրուողները թող կարգան մասնաւորապէս «Նշակ ի խորքերդեան նամակները», «Բաց նամակ Մուրատ Բեկին», «Երիտասարդ Թիւրքիա»: Մեր գործիչ-ընկերները այդ կողմից օրինակելի են հանգիսացել և կարողացել են օտարասեռ անհաստաներից որոշ չափով օգտուել, բայց այլ է քաղաքական-կուսակցական կազմակերպութիւն, այլ համերաշխական կապերի հաստատութիւն:

— «Ինչո՞ւ համար մասնաճիւղային կազմակերպութիւններ չէք անում թիւրք ժողովրդի մէջ», — դեռ մօտերս էր՝ մենք այդ հարցը աւելինք մի ինտելիգենտ թիւրքի, որ բարձրագոյն կրթութիւն էր ստացել և երկար ժամանակ էլ ապրել Քոբր-Հայքի, Հայաստանի և Թիւրքիայի այլ աչքի ընկնող մասերի մէջ:

— Գա անկարելի է, բացարձակ անկարելի, որովհետեւ 2-3 հոգի դեռ միտակ չեկան՝ լուրջ հասցնում են կառավարութեանը: Գեռ մօլլա, պաշտօնէութիւն, կրօնական զգացմունքներ, աւանդութիւններ... մեր մէջ տիրապետող են: Անհատներից կարելի է օգտուիլ, բայց եւրոպական մտքով կամ ձեզ նման կազմակերպութիւններ անել՝ անհնար է. փորձել ենք շատ անգամ և համոզուել, որ դեռ շատ վաղ է, և այժմ անկարելի, մեր ընկերների մեծամասնութիւնը զո՛հ են գնացել հէնց այդ ձգտումին: — Ահա՛ մեր սուտացած պատասխանը, և այս ասողը իր ազգը լաւ ճանաչող ու համիդեան՝ քմահաճոյքի զոհերից էլ մէկը, — մի անձնաւորութիւն՝ որ չի հաւատում թէ Թիւրքիայում կազմակերպական-հաւաքական ջանքերով մի բան կարելի է անել, այլ, որ և է փոփոխութեան համար. յոյսը պիտի դնել ազգեցիկ, զօրաւոր կրօնական և քաղաքական՝ անհատների վրայ... — «Ամբողջ 12 տարի աշխատելով՝ հազիւ հազ 2-3 թիւրք կարողացայ շահել և յետոյ ի տակտիս զարձնել մեզ գործակցելու համար» — և այդ ասողը Արամն է, Նշակեան գործիչ մեր այն ընկերը, որի յեղափոխական գործունէութեան ձեռնհասութիւնը ամէն քննադատութիւնից վեր է:

Այո՛, ձգտել համերաշխելու համար Հայաստանի մէջ եղած տարասեռ ժողովրդներին, որպէսզի նրանք բոլորն էլ դէմ առ դէմ գրուին սուլթանականութեան դա թէօրիայի մէջ շատ լաւ է, բայց իրականութեան:

— Մենք էլ երբեմն նոյն այդ թէօրիայով առաջնորդուեցանք, աշխատեցինք, բայց շատ քիչ արդիւնք ունեցանք: Բայց այստեղ ո՛չ սխտէմն էր մեղաւոր, ո՛չ էլ սօցիալիզմը կամ նացիօնալիզմը, — այլ այդտեղ կայ մի իրականութիւն, տեղական պայման՝ որ աչքի առաջ պիտի աւնել և մենք այդ իրականութեան վրան կեցած է որ քայլում ենք, անելով այն ինչ կարողանում ենք:

Հետևաբար, եթէ ուրոյն, առանձին կազմակերպական եղանակով ենք ղեկավարում և ոչ թէ խառն, — դա ունի իր զօրաւոր և հրամայական պատճառները, ուրեմն այդ կողմից որ և է մեղադրանք մեր նորեւեկների կողմից բողոքովն աւելորդ է, մասնաւոր որ իրենք դեռ մոռուած գահիճների մէջ են արտասանում՝ իրենց հոետորական այդ կտորները: Երբ կհաճին արեան դաշտը դուրս գալ, այն ժամանակ կաեսենն թէ ո՛վ է եղած իրականութիւնը ուղիղ ըմբռնողը, ո՛վ սխալ և ո՛վ որին դատապարտելու իրաւունք ունեցող:

Բայց ի՞նչ հարկ կայ այդ հարցն իսկ դնել, քանի որ այդ քննադատները չեն ցանկանում մատը մատին զարկել Ցածկա-Հայաստանի համար, երկիւղ կրելով որ մի գուցէ իրենց անհամբերող վարժապետներից նացիօնալիստներ անունով թրծուին, որը, իհարկէ, մեծ հարուած կլինի իրենց մօղայական արժանապատուութեանը:

Հայաստան և Թիւրքիա, մեր կրիտիկոսները մի առանձին խորժակով են մատնանիշում պատմական մատերի տալիզմը: — Այսպէս թէ այնպէս, վերջապէս Թիւրքիայի ամբողջ տարածութեան մէջ գտնուած ժողովուրդները իրարու հետ կապուած են. նրանք բոլորն էլ ունին միևնոյն ճակատագիրը, տնտեսական, քաղաքական համանման կացութիւն, ուստի ամբողջութեան ճակատագիրը փոխելով է, որ մտանք, կտորինը կարելի է փոխել: Թուրք, քիւրդ, արաբ, ալբանացի չէրբէզ, աւշար, ասորի... սրանք բոլորը սուլթանական քմահաճոյքի, նրա բռնապետութեան զոհերը չե՞ն, նրանք չե՞ն օրն ի բուն տընողը, չարչարուողը և փէշերով ոսկին սուլթանի գանձարանը լցնելուց յետոյ՝ քաղց, մնօթի, կիսամերկ պառկողները. ինչո՞ւ այդ բոլոր ժողովրդներին, գէթ նրանց հարստահարուած գասակարգերին չմիացնել, մէկտեղ չբերել և սուլթանականութեան դէմ չկանգնեցնել: Ահա՛ խօսքերը, որ դուրս են թուշում պեղանաների բերանից:

Թէօրիայի կողմից գահիճների մէջ այդ շատ լաւ է այո՛, բայց իրական էթեան:

Խօսենք համառօտ: Այստեղ ի հարկէ, դեռ պատմական մատերիալիզմի անուով խօսելը հերիք չէ. հարկ է գիտնալ և՛ այն՝ որ պատմական մատերիալիզմը արգելք չի կարող լինել պետութիւններին մեռնելուն, քայքայելուն, ինչպէս և անհատների: Պատմական մատերիալիզմը օգնեց թէ՛ ընդհակառակը՝ աւելի հարկեցուցիչ և անհրաժեշտ դարձրեց որ Սերբիան, Գունաստանը Ռուսմանիան, Բուլղարիան բաժանուէին Թուրքիայից. իսկ Միջինասիան, Թուրքիան անցնէին Գրանսիայի ձեռքը, Ալժիրը հիւսիսային և արեւելեան ասիայը. ինչպէս և Հայաստանի մէկ մասը՝ Ռուսիային, ևն ևն:

Թողնենք այդ մասը:

Որպէսզի Թիւրքիան մի ամբողջութիւն կազմելով ապրի և իր գոյութիւնը շարունակի. հարկաւոր է, ամենից առաջ որ նրա բաղկացուցիչ մասերը այդ ցանկանան, իսկ ցանկութիւնը քմահաճոյքի հետևանք չէ այլ տեղայն վրայ գործող ազգակների պահանջ, — բայց արդեօք այդ ցանկութիւնը այդ ձեռք-

տուժը գոյութիւն ունի թիւրքիան կազմող բազկացուցիչ բոլոր տարրերի մէջը — Մակեդոնիան ուզում է բաժանուիլ այդ արևի պէս պարզ է, Միւրջշտեգի ծըրագրի գործադրութիւն, ինքնավարութիւն, — դրանք բոլորը ելակէտեր են անջատման, բաժանման նպատակին հասնելու:

Նրեան էի բաժանումը ժամանակի, օրուան խնդիր է միայն:

Արաբիան բաժանուելու որոշ հակամիտութիւն ունի: Արաբիան լաւ ճանաչող արաբ գործիչները զբաղանապէս այն կարծիքին են, որ այդ երկիրը երբ և է պիտի դադրի օսմանեան կայսրութեան մասը լինելուց, — դա իր ներքին մղումը, ձգտումն է, դեռ մի կողմ թողած արտաքինը: Մնում է ո՞վ — քիւրդը, չէրքէզը, աւշարը, լազը... — սրանք են որ պիտի կարողանան, աշխատեն նորագոյն պետութիւն կազմել օսմանեան խարխլած կայսրութիւնից, երբ իրենցից ոմանք նստակեաց չեն, ոմանք էլ կիսաբարբարոսներ են:

Իսկ ախրող օսմանչի տարրը, — վեր առնենք նրա մէջ գործող երիտասարդութիւնը՝ միայն, մի կողմ թողնելով ծերունիները և ազգայնականները: Քուրք երիտասարդութեան մէջ այժմս կայ երկու խմբակ. մէկը բողոքած «Թէրագզը» ի շուրջը, միւսը՝ «Մէշվէրէթ ի Առաջնները, Միտհատի Ասհմանագրութիւնից յետոյ, յայտնի աստիճան ընդունում են վարչական ինքնավարութեան սիստէմը տարասեռ ժողովրդների համար. բայց իրենք թէ թուով շատ քիչ են, հազիւ մի քանի հոգի, և թէ որ և է կազմակերպութիւն ու ձիւղաւորումներ չունին: Ըմեն յոյս գրել են եւրոպական պետութիւնների՝ արտաքին միջամտութեան և իրենց մեծեր» ի վրան:

«Մէշվէրէթ» ի խմբակը յայտնի է. սրանք բացարձակ ազգայնականներ են, այնքան անհամբերող, որ Հայկական Խնդրի, մայիս 11-ի ծրագրի անունն անգամ չեն ուզում լսել: Սրանք էլ ոչ օրինաւոր կազմակերպութիւն ունին, ոչ էլ պատկանելի թիւ, եղածը անհատներ են այս ու այն կողմ պրուած:

Իրկուսն էլ յեղափոխական շարժումների դէմ են: Պարզ է որ սրանց բերած ծրագրերն անգամ աւելի քան անբաւական են եղած դժուարութիւնները հարթելու և նոր թիւրքիա կազմելու:

Եթէ թուրք ժողովրդի յառաջագէմ մասը, նրա երիտասարդութիւնը ցանկանում է Միտհատի սահմանադրութեան վերահաստատութիւնը, մենք դրան գէմ չենք, բայց նրա համար մենք առանձին ջանք և գործունէութիւն չենք կարող գնել որովհետև այդ սակատուական սահմանադրութիւնը իր էութեամբ և ոչ մէկ տարրի գոհացում կարող է տալ ու նրանց վիճակին փոփոխութիւն բերել:

Եւ որովհետև խնդրի այդ մասը երկարօրէն բացատրած ենք «Երիտասարդ թիւրքիա» մեր ուսումնասիրութեան մէջ. ուստի կանգ չենք առնում:

Ուրեմն թիւրք յառաջագէմ մասի, երիտասարդութեան բերած ծրագրի ամբողջական գործադրութիւնն անգամ չի կարող եղած բարդութիւնները վերացնել և նոր թիւրքիա ստեղծել:

Բայց ներքին տարրերը դեռ մի կողմ թողած, հարց է թէ արդեօք եւրոպական պետութիւնները կը ցանկանան մի ամբողջական, նոր-թիւրքիա տեսնել: Շատ իրողութիւններ կան հաստատող որ նրանք այդ

ցանկութիւնը չունին և իրենց շահերը այդ չեն պահանջում:

Արդ, կարող ենք մենք դադարեցնել եւրոպական պետութիւնների արտաքին քաղաքականութիւնը և նրանց յառաջնադասման միտումը՝ նոյն իսկ երբ մենք և միւս բոլոր տարրերը համերաշխենք և նոր թիւրքիա կազմել ուզենք:

Գարեք շարունակ Արևելեան Խնդիրը խորհրդածութեան առարկայ է դարձել: Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան խնդիրը նոր չէ՝ դրուած, նա շատ մաքեր է յուզած, երկար խորհրդածութեան նիւթ է եղած. միայն այդքան չէ. նրա մարմնացման մասին անդու և անկեղծ ջանքեր են թափուած, — մասնաւորապէս գրանսիան և Անգլիան այդ ուղղութեամբ առանձնապէս աշխատանք են դրած. «Մեծ էլզու» պատմութիւնը և ձեռնարկները յայտնի են: Բայց այդ բոլորը ապարդիւն: Ըմեն բան եկել է ասելու, որ ընդհանուր թիւրքիան բարեկարգել անկարելի է, բացարձակապէս անկարելի: Արք այսօր փոքրիկ Մակեդոնիայի մէջ թեթեւ բարեկարգութիւններ ներմուծելու համար դրամական պահանջը շատ դժուարութեամբ է կատարւում, ո՛ր մնաց եթէ արմատական բարեկարգութիւնների ձեռնարկուի բոլոր թիւրքիայի համար: Գրա համար տարրեր, աղբակներ են պէտք, որ թիւրքիան չունի, — միաձայն եզրակացրել են տնտեսագէտ, քաղաքագէտ և թիւրքիան ճանաչող ամէն պատմաբան և հրատարակախօս: Ու այդ հանգամանքը աչքի առաջ ունենալու համար է, որ անջատման, ինքնավարութեան և բաժանման սիստէմն են ընդունած թիւրքիայի նկատմամբ: Եւ այդ սիստէմները գործել են շատ երկար ժամանակներից ի վեր:

Թիւրքիայի մէջ գործող հայ կուսակցութիւնները եղած են բոլոր, արդէն գոյութիւն ունեցող պայմանները չեն կարող աչքի առաջ չունենալ և ըստ այնմ շարժուել:

Թող ապրի թիւրքիան, բայց ապրինք մենք էլ: Իսկ երբ այդ երկրի մէջ եղած տիրող տարրը՝ չեն, նոր մեզ ապրելու նուազագոյն պայմաններ իսկ չեն տալիս, երբ մայիս 11-ի ծրագիրն անգամ չեն ուզում գործադրուած տեսնել — մենք չենք որ կարող պիտի լինենք դադարեցնել պատմութեան հոսանքը և մեր շատ սահմանափակ ոյժերով կատարենք, գործադրենք այն, ինչ որ դարերի ընթացքում եւրոպական պետութիւններն անգամ չկարողացան անել — այն է ընդհանուր թիւրքիայի բարեկարգութեան մէջ տեսնել մեր վիճակի բարւոքումը և այդ ուղղութեամբ աշխատել:

Արդ, եթէ մենք վերջնականապէս ձգտում ենք մեր բախար բաժանել թիւրքիայից, եթէ աշխատում ենք Հայաստանը անջատել թիւրք կայսրութիւնից, այդ ոչ թէ նրա համար որ մենք նացիօնալիստներ ենք, այլ որովհետև այդ ուղղութիւնը, այդ հոսանքը, պատմութիւնը, իրերի ընթացքը, մեզնից մի պետութեան կացութիւնը հրամայական և անհրաժեշտ է դարձրել:

Մենք անում ենք այն, ինչոր կանէր ամէն սօցիալիստ, եթէ նա ուզէր կանգնել պատմական մատերիալիզմի և քաղաքակրթութեան առած ուղղութեան վրա:

Ս. ԱՆՊԱՀ-ԳԻՒԼԻԱՆ

# Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

## ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

Քանի մը բանտարկեալներու մասնութեամբ հայ բանտարկեալներու ղովուշը (բանտասենեակը) իր ստխուզարկութեան ենթարկուեցաւ: Արդէն հայերը ծանրը հակողութեան տակ էին, իսկ այդ մասնութեան անմիջական հետեանքը այն եղաւ, որ հայերը ցրուեցին սաճիկ ղովուշներու մէջ:

Այս դէպքէն հազիւ շաբաթ մը անցած, յուլիս 25 ին (հ. տ) բանտին մէջ ժանտախտի դէպքեր պատահեցան: Ամբողջ բանտը արգելքի տակ առին, երկու շաբաթ անցնելէ վերջ՝ ժանտախտի դէպքը պատահած ղովուշի բանտարկելոց անկողինները և գոյքերը ամբողջը այրեցին՝ բացի հագուստեղէններէ: Բանտարկեալներու վիճակը այնուհետև դարձաւ անտանելի. կառավարութիւնը թէև խոստացաւ անկողին տալ, բայց միշտ ցարդ ոչինչ տուած չէ՝ բացի իւրաքանչիւր երկուսին մաշուած մի խսրի կտորէ: Ո՞վանք ստացած են նաև թեթև ծածկոց:

Հայ բանտարկեալները նորէն անկողին շինել տալու կարողութիւն չունին և ո՛չ ալ իրենց սուսները ունին որ բերել տան: Ամէնքն ալ կը պառկին մզոտած փսիւթներու վրայ:

Իժիշկներու խորհուրդը յայտնեց, որ հիւանդութիւններ յառաջ գալուն եթէ ոչ միակ գէթ գլխուոր պատճառն է բանտի փոքր և բանտարկեալներու իրարու վրայ լցուած լինելը: Եւ սա շատ ճիշդ է բանտը այնքան փոքր, բանտարկեալները այնքան շատ են, որ ձկնիւրու պէս իրարու վրայ կը պառկին: Ատոր վրայ աւելցնելով ղովուշներու սոսկալի հակառողջական պայմանները, հասկնալի կլլայ, որ րեմի թէ ինչո՞ւ հիւանդութիւններ այստեղ աւելի յաճախ կը պատահին:

Հիւանդութեան և տեղի նեղութեան պատճառով՝ բանտարկեալներու կէսը փոխադրեցին Այսթոֆիա կոչուած մզկիթը: Մտադրութիւն ունին վեճիսին հաստատուած բանտարկեալները ուրիշ վայրերու բերգիւրդը արտօրել:

Օգոստոս 15-ին (հ. տ.) ցկ'անս բերդարգելութեան դատապարտուած Ահարոն Եսայեանը՝ յոյն և տաճիկ երկու բանտարկեալներու հետ՝ յաջողեցաւ բանտէն փախչիլ, փախչողները ազատ են:

Փախչող Ահարոն Եսայեանը հետեւեալ յիշատակագիրն է ձգած. « . . . 1904 յուլիս 15-ին եկայ բանտ և 1904 օգոստոս 24-ին դատապարտուեցայ ցկ'անս բերդարգելութեան: 1905 սեպտեմբեր 15-ին Տրդատ Իսրայէլեանը մեռաւ. 1906 մայիս 11-ին Համբարձում Խոշեանը կախուեցաւ: 1906 յուլիս 1-ին ստացանք մեր թաստիքն ամէն (հաստատութեան թուղթը), որով Պօլսոյ դատարանը մեր գէմ եղած վճիռը հաստատած էր . . . »:

ԱՆՑՈՐԴ

10 Սեպտ. (հ. տ.), 1906  
ՏՐԱՊԻԶՈՆ

## ՆԱՄԱԿ ՊԱՐՏԻԶԱԿԻՑ

Պարտիզակ՝ Թիւրքիոյ ամենամեծ գիւղաբաղաբներէն մին Պօլսէն հինգ ժամ հեռու՝ Նիկոմիդիոյ ճիշդ դիմացը, Ս. Մինասի լեռան վրայ կառուցուած հիանալի տեսքով վայր մըն է: Իր անունը ստացած է բազմաթիւ այդիւններէն ու պարտէզներէն և այս պատճառաւ արժանի է «Պարտէզի-ակն» կոչուելու: Պարտիզակ մասնաւորապէս նշանաւոր է իր Ս. Մինասի բարձունքով, ուր կայ փոքրիկ մատուռ մը՝ բարձրարարձ ու հովանաւոր շագանակինիներով շքեղապատուած, ասոնց միանալով նաև համանուն պողաղբիւրը՝ եզական վայր մը կը կրնեն: Յաճախ պատահութիւնը ունեցած եմ՝ բարձունքէն բացատար զետեղի. դիմացը Նիկոմետիոս լեռան կողմն վրայ պառկած է որբերը ջուրին մէջ. սագին ծովը միապաղաղ վիճք կը պատկերէ, անգին տափարակ դաշտ մը լեռներու փոքրիկ շղթայով մը պարփակուած, և ճիշդ վարն ալ Ս. Մինասի քղանցքէն կսխուած Պարտիզակը սողարթախիտ և մանրատերև ծառերու մէջ պահուրտած է. արդարև սքանչելի է իր ամբողջութիւնը:

Պարտիզակ 15,000 ժողովուրդէ բաղկացած գուտ հայաբնակ գիւղ մըն է: Ժողովուրդը ընդհանրապէս շերամաբուծութեամբ և երկրագործութեամբ կը զբաղին և այր թէ կին ժրաջան, աշխատասէր են:

Պարտիզակ գուտ հայաբնակ գիւղ մը ըլլալով՝ ուրիշ տեղերու բաղադատմամբ աւելի ազատութիւն կը վայելէ՝ իր քաջարի երիտասարդներուն շնորհիւ: Ասկէ մի քանի տարի առաջ կառավարութիւնը ո՞վեց «կիւռ-ճիւռներ և «Չիրքէղ»ներ հաստատել Պարտիզակի մէջ, և երբ մի քանի ընտանիքներ արդէն սկսած էին գալ՝ հայ երիտասարդները արգելք հանդիսացան զենքով . . . միւսներն ալ վախցան այլևս գալու և բնակչութիւն հաստատելու:

Կառավարութեան կողմէ իբր պաշտօնեայ կան միւտիւր մը և՛ Յոսիկաններ, որոնցմէ մին ալ հայ է:

Յաւով կը տեղեկացնեմ թէ երբտասարդութիւնը հետզհետէ արտասահման գաղթելու հակամէտ է և եթէ այս գաղթումին առաջքը չառնուի, վախ կայ որ տաճիկներ այսուհետև հաստատուին, քանի որ բաղնիք ալ հաստատուեցաւ հայերու կողմէ:

Ինչպէս վերև ըսի, կառավարութիւնը պարտիզակցիներուն հաշտ աչքով չը նայիր: Յաճախ փերեզակի ձևին տակ լրտեսներ կուգան՝ տուններ կը մտնեն. հայերու խղձայի վիճակին վրայ կուլան ու տըգէտ կիններն ալ երբեմն խաբուելով՝ բերաններէն վրտանդաւոր խօսքիւր կը հանին, հետեւեալը՝ յաջորդ օրը մի քանի երիտասարդ բանտ կերթան և սոսկալի ծեծ մը ուտելով կը դառնան:

Լրտեսներու մասնութեամբ առաւօտ մը կանուխ Պարտիզակի նաւաւատոյցը բաւական մեծ շոգեմաւ մը տեսնուեցաւ. արտասովոր բան մըն էր բոլորիս համար ալ, քիչ վերջը զինուորները ողողեցին գիւղը՝

ամէլը մէյ մէկ անկիւն կեցան՝ ուսանք մասնուած առ- ները մասն պարտեզները և տունը փորեցին առանց բան մը գտնելու, անգորգներուն մեծէն մինչև փորրի- կին վոյ կը խուզարկուէր: Բան մը չգտան երե- կոյին շոգենաւ վերագործան՝ իրենց հետ տանելով գիւղի ջրերէն Աղասի աղա Տէր Մկրտիչեան, զազա- րոս աղա Գանջէլեան և ուրիշ երեք ալ թուով հինգ հոգի: Ասոնց բոլորին ալ ուղղակի ելլալը չհամարին ամէնէն փոքուր պանդոկը տարին, հոն 1-2 օր անօթի թողոցին, հարցաքննեցին, նեղութիւններ տո ին, սակայն առանց արգիւնքի մը, որովհետև խեղ- ճերը ոչ մի բանէ տեղեկութիւն չունէին և մանաւանդ որ իրենք Սուլթանին հըռ հպատակներէն էին: Հինգ օր պահելէ վերջ ուղարկեցին Պարտիզակ, ու յետոյ երիտասարդներէն շատեր բանտ տարին, վերջիններուս ալ շատ նեղութիւններ տուին, բաւական չարչարեցին ու 15 օր վերջ դարձեալ թողուցին:

Ոչ միայն պարտիզակցիներուն, այլ մանաւանդ հոն հաստատուած Ամերիկեան բարձրագոյն վարժա- րանին ստակալի թշնամի է կառավարութիւնը. տղայոց գուլպոյ, թաշկինակ ծախող լրտեսներ անպակաս են, որոնք պղտիկ աղայոց բերնէն խօսք առնելու կաշխա- տին: Այս լրտեսներու պատճառաւ, դպրոցի պահա- պանը՝ նիկողոս Զենորեան Իզմիտ բանտ տարին, հոն անլուր կտտանքներ տուին, մերկ սառով ջուրին մէջ ժամերով կեցուցին, խորագանի հարուածներով ամ- բողջ մարմինը կապուցուցին և 10 օր վերջ՝ մարդը հալած ու մաշած՝ երաշխաւորի մը շնորհիւ տուն փո- խադրուեցաւ, և հիմա ալ հսկողութեան տակ է: Եր- կու անգամ ուղեցին դպրոցը մանել, սակայն Ամերիկ- եան հաստատութիւն ըլլալով՝ արգիլուեցան: Տնօրէն Սըր Զէյմպըրս շատ խիստ է՝ շատ ու քիչ ազատա- կան գաղափարներ ունեցող տղոց հետ, մի քանին վանտեց, ինչպէս և խոհարարներէն մէկն ալ: Կառա- վարութիւնը դպրոցը՝ որպէս վտանգաւոր վայր, գո- ցելու ելաւ, սակայն Ամերիկեան կառավարութեան միջամտութեամբ այդ վտանգին առջևը առնուեցաւ:

ԲՐՈՒՏՈՍ

15 Հոկտ, 1906  
ՊԱՐՏԻԶԱԿ

**ՆԵՄԵՎ ԹՐԹՕ-ՊԱՐՏԻԶԱԿԵՆ ՍԵՀՄԵՆԵԳԼՍԻՑ**

Մահմեդական երկու պետութիւնների սահմա- նագծային վեճը տակաւին վերջանալիք չունի, իրա- քանչիւր օրը նոր կերպորանք է առնում. երբեմն խիստ սուր, երբեմն աւելի մեղմ ու սերտ բարեկա- մական: Խնդիրը առհասարակ շատ գաղտնի է պահ- ւում, ամէն բան կատարում է վարպետի ետևում:

Այսպէս, մինչ Թիւրքիան նորանոր խտտութիւններ է ձեռք առնում սահմանագծի երկարութեամբ, մինչ նրա պատերազմական պաշտօնեաները մէկ-միւսին յա- ջորդաբար գալիս են ռազմական պատրաստութիւնները

տեսնելու և զիրքերը քննելու և մանաւանդ նրանք օրից օր աւելի քան արհամարհոտ են դառնում, բա- ցէն անպատում պարսիկ կառավարութեան և նրա պաշտօնեաներին, ահա՛ այս բոլորը երբ մարդիկ ըն- դունում են մտիկ օրերում տեղի ունենալիք պատե- րազմ-մրցամարտի յայտարար նշան և՛ ահ ու դողով սպասում այդ մարդակեր ու աշխարհաւեր գալիքին, — այս կողմից պարսիկ կառավարութիւնը կարծես չի տեսնում ու չի լսում և անգամ տեղեց չի շարժում:

Ինչպէս և ինչպէս բացատրել այս:

Երկուսում պարսկական հողից մի բաժնի տի- րացան, այժմ էլ մտեսնում են Ուրմիին, այս քանի օրեր թիւրք կառավարութիւնը աճուրդի է հանել գաւառակների և բոլոր գիւղերի կառավարապետ- կան արմատաց տասանորդը, մինչդեռ այս շրջան- ները պատկանում են պարսիկ տէրութեան, թիւրք կանո- նաւոր զօրքերը արգէն բանակել են պարսից հողում, թիւրք պատերազմական մի հազարապետ էրբ անի հարբ ամութիւններ է կառուցանում շտապով:

Սերջին օրերում օսմանեան կառավարութիւնը բացարձակապէս և ամենախիստ միջոցներով արգիլեց երթևեկութիւնը, մինչև անգամ ապրանքների փոխա- րըրութիւնը:

Սիւննի պարսկաստանցիները անհամբեր սպասում են դաւանակից և մեծ պետութեան բարի գալստեան. երջանիկները արգէն տեսնում են մեծ խաղի՞ն կար- մազուխ զօրքերին ու հրձուած Փէսերի կարմու- թիւնից, ցնծում օրօրուող փիւսքիւլն երի ծրի- ծրիանքի հետ:

\*\*\*

Ինչպէս ասացի՝ վարաբոյրի ետև բեմի վոյ՝ դե- րասաններ մի բան խաղում են, այժմ դեռ յայտնի չէ, ողբերգութիւն է թէ կատակերգութիւն:

Գիւրգերը որ մի ժամանակ դադարել էին, այս մէկ ամիս է՝ ինչոր սկսել են գործել էլ՝ աւելի հա- մարձակ ու յանդուգն:

Աւազակային արշաւախմբերը օրերի ծանապարհով հեռանում են սահմանագլխից ու մտնում Պարս- կաստան:

Չափարի եղբայր Սմկօն և հաւատարիմ զին- ուոր Միրզան իրենց կտրիճ խմբով ամբողջ մէկ ա- միս է կտրել են խօյ, Սալմաստ և Թաւրիզ տանող ճանապարհները, իրենց ճանկն ընկնող թիւրքերին կո- ղոպում և կոտորում են անխնայ մինչև այսօր ըս- պանուածների թիւը 3) ից անց է:

Փոստային հաղորդակցութիւնը խպառ խանգար- ուել է, մինչև իսկ ընդհատուել է, շաբաթներով փոստը չի ստացւում, քսան ձիււոր զօրքեր չեն հա- մարձակում ընկերանալ փոստին, որը մի քանի ան- գամ կողոպտուեց և յարձակման ենթարկուեց:

Գրողական նոյն աւազակախումբը Սալմաստում յարձակուեց Սաւրա գիւղի վոյ և ուղեց կողոպտել կալերը: Հին քաղաքից տարան քսան ձի և սպան-

նեցին 4 թիւրքեր: Սուլաւ և Չիջակ գիւղերի նախնիները ու ոչխարի հօտերը միանգամից ստարան:

Ուրմիւս, քրդական մի այլ աւազակախումբ բէգլագ սներից կողոպտեց Աղբւլ-Աշուղ գիւղի հարուստ տները, Բողլբօ գիւղում սպանեցին մէկ տղամարդ և մէկ կին հայերից, կողոպտեցին տները:

Այսպէս թալանում են շատ գիւղեր, ջրաղացներ, կարաւաններ և ճանապարհորդներ:

Մի բան միայն խիստ աչքի է ընկնում,— Սալամաստի և ճանապարհների վրայ կատարուած գէպքերում մինչև այսօր մէկ հայ գիւղ և կամ ճամբորդ չէ կողոպտուած:

Ուր, երբ և ինչպէ՞ս կը վերջանան այս դէպքերը — դա մօտիկ սպագան ցոյց կտայ:

Տնտեսական ամենածայրայեղ անկման հասած՝ սոված և աղքատացած թիւերը սպրում է այս սարսափների հետ, այս տանջանքների մէջ և փոխանակ հանգրստի ու հացի՝ նրան տալիս են հարազատի արիւնը, գնդակ, կապար, վառօդ ու սուր-թուր:

Սահմանի արևմտեան մասում, Թիւրքիստանում կատարուած են աւելի նշանակալից դէպքեր:

Շէյխ-Մահմուդ Սագըղի բրգեր և օսմանեան զօրքերը կուռել են, երկու կողմից էլ եղել են շատ սպանուածներ, իսկ շէյխը բեռներով «թիւթիս» է ուղարկում Լաիջան բանակած զօրքին:

Ուրմիւսի ուսուական հիւպատոսը հիւր է գնում շէյխին, հիւրասիրում է այնտեղ մի քանի օր: Վանի ուսուական հիւպատոսը գալիս է Ջուլամբերկ ասորոց մարշիմօնի մօտ, անցնում շէյխին և սպա գալիս Ուրմիւսի միւս պաշտօնակցին հիւր:

Հրամանատարներ ու հազարապետներ մէկ-միւսին յաջորդաբար այցելում են սահման և վերադառնում:

Հայերի երթևեկութիւնը բոլորովն արգելուած է: Սահմանապահ հազարապետը կարգադրել է հեռացնել երթևեկող հայերին անխօսի կողոպտել:

Վիւրդ ցեղապետները և նշանաւորները և Պօլիս են տարում, այնտեղ նրան անմիջապէս շրջապատում են պալատական փափկութիւններով, կրծքերը զարդարում շքանշաններով և հագցնում ոսկեկուռ հանդերձներ: Բաղդաւոր քրդեր սրտի բուռն ուրախութեամբ հեռագրում են իրենց մերձաւորներին իրենց արուած պաշտօնների, պատիւների և ստացած պաշտօն—փառքի մասին: Լեռնցի քրդուհիւր իրենց աւետիս բերողներին վարձատրում են թանկագին նւթոյններով և առատ ոսկիներով:

Անցնում է մի կարճ ժամանակ, ամէն բան հընանում է, իսկ և Պօլիս տարուած քրդերին արտուում են և կամ ձովի ալիքներին կեր տալիս: Այսպէս պատահեց նշանաւոր Մահմուդ բէգի հետ, որին վերջերս ընդհանուր հրամանատարութեան պաշտօն և օսմանի է Բ. կարգի պատուանշան էր տրուած: Իրեն սահմանադրելի վրայ անհամբեր սպասող կինն ու մերձաւորները երկար սպասելուց յետոյ՝ յուսահատեցան,

այժմ նախկինի բոլորովն հակառակը՝ ո՛չ լուր է այժմ ո՛չ ձայն, ստու՛մ են նա էլ է ձկների կերակուր դարձել:

Միայն տկանատես չլինենք կատարուածներին, այլ համոզուած լինելով՝ որ ամէն անցած — դարձած եթէ ո՛չ իր անմիջական ազդեցո թիւր գէթ իր հակահարուածը պիտի սեննայ և՛ մեզ ու մեր դասի նկատմամբ, ուստի այս նշանակալից բուպէնքի մէջ՝ հարկուոր է գործել շրջահայեցութեամբ և ջանալ օգտուել ներկայացած պատիհ հանգամանքներից:

ԱՍՕ

Սեպտ. 15 (հ. ա.) 1906

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԽՆԿԻՐ ԾՈՌՔՆԸ

— Ամէնից վերադարձող թուրք երկու սպայ գահիրէ հանգիպելով՝ Phare d'Alexandrie թերթին տեղեկութիւն են տուել թէ Սանտան դեռ նուաճուած չէ թուրքերի կողմից և, որպէս թէ, ապրստամբների մէջ արդէն լքումն է տրուում ու Ֆէյլի փաշան ռազմածրքի է սպասում, որպէսզի կարողանայ արշաւանքը վերսկսել: Սպանները ասել են և՛ ա՛ն, թէ ապստամբապետ Եահիան Սեյիմայի վրայ յարձակում գործելու իր մտադրութիւնից յետ է կանգնել, այդ քաղաքի լաւ պաշտպանուած լինելուն համար մի ժէներալի կողմից, որին նա խոստացել է հնազանդուել և զենքը վար դնել, եթէ միայն Սուլթանը կհամաձայնի իբն էլ Ռաշիտին պաշտօնանկ անել: Եահիան այս ցանկութեան մասին տեղեկագրուած է Պօլիս — Սպանների տուած այդ տեղեկութիւնները թէ որքան միտումնաւոր են, այդ մասին բացատրութիւնը աւելորդ է:

— Manchester Guardian-ի Պոլսոյ թղթակիցը, որ իր տեղեկութիւնները միշտ քաղում է արժանահաւատ աղբիւրներից, հաստատում է այն լուրը, որ ո՛չ թէ Սուլթանի հիւանդութիւնը անբուժելի է, այլ որ նա հազիւ մի քանի ամսուայ կհանք կորող է ունենալ, ինչպէս որ որոշ կերպով այդ ասել է գովաւոր Բերդմանը: Թէ այդ լուրը որքան ստոյգ է, թղթակիցը հաստատում է այն իբողութեամբ, որ Համիդին շրջապատող կամարիլան մի կողմից արդէն ամէն զբաղուածութիւններ ձեռք է առնում մեկնելու, միւս կողմից էլ Սուլթան Համիդին համոզում են որ պետական հարուածի միջոցով այժմեանից իսկ իր որդի Բուրհան Էստիֆին թագաժառանգ յայտարարի, որպէսզի այդպիսով յաջորդութեան իրաւունքից զրկուեն Ռէշատը, Իսուֆ Իզզեդաֆինը և մանաւանդ իշխան Մէջիտը, որ Ապտիւլ Ազիզի երկրորդ որդին է: Իշխան Մէջիտը, որ ծնած է 1869-ի յուլիս 27-ին, կամարիլայի կողմից ներկայացում է որպէս յետագիմական ծայրայեղորէն մոլեոսնդ և գերմանաժող մի անձնաւորութիւն, մինչգեռ անդղիական թերթի թղթակցի ասելով, նա ո՛չ միայն յետագիմական չէ, այլ ստացած է եւրոպական

լաւ կրթութիւն և եղած իշխաններից ամենից ազատամիտն է:

— «Ազատիւ Համիրը կմեռնի» վերնագրով մի յայտարարութիւն է թողած «Երեսօտարգ թուրքեր» ի այն խմբակը, որ «Օտտոման միութեան և յառաջագիտութեան մասնախումբ» (Թէրագգը վէ իթտիհատ ճէ միէթի) անունով է յայտնի: Սուլթանի վտանգաւոր և սնրութեւի հիւանդութիւնը հազիւ նրա մի քանի ամսուան կեանք ունենալը կամ յանկարծամահ լինելը մասնաինչիւրց յետոյ, սոււում է:

Սուլթան Համիրի մահը օսմանցիների համար մի մեծ տօն է, բայց այս տօնի ժամանակ մեծ վտանգների էլ հաւանականութիւն կայ: Անզգոյշ չլինենք: Սուլթան Համիրը 30 տարիից ի վեր հայրենիքը քանդեց, երկրին կէտը թշնամուս տուեց, ծովերի մէջ մեր զրահաօրները փճացրեց, ցամաքի վրայ մեր բանակները խղճովի կերպով տկարացրեց նահանգները սրսրավայր դարձրեց և ժողովուրդը աղքատացրեց. երկիրը թշուառութեան մատնեց, կառավարութեան կարգերը և կրօնական օրէնքները աւերեց, երկրի հաստատութիւններից և քաղաքակրթական կողմերից նշոյլ անգամ չթողեց, կառավարութիւնը իր անձի սեպհակա՛նութիւնը դարձրեց, հայրենիքի վիճակը և տպագան մտածող ու եւրոպական դիւանագիտութիւնից հասկացող նախարարապետներին բնաջինջ արեց և իրեն աջակից առաւ, գործի գլուխ անցրեց աւագաններին ու դաւաճաններին:

Ազատիւ Համիրը մեռնելուն պէս անիշխանութիւն կյառաջանայ և այդ անիշխանութիւնից օգտուելով՝ հաւանական է որ յեղափոխականները ալմուկ բարձրացնեն՝ օտար միջամտութիւն հրաւիրելու նպատակով:

Այս պատճառով հայրենիքի փրկութեան ցանկացող մահաբեկան և ոչ—մահաբեկան հայրենակիցները արթուն մտալու են հետեւեալ կէտերը նկատողութեան առնելով.

- ա) Աշխատել Ռէշիդ էֆէնդին գահ բարձրացնել:
- բ) Հայրենիքի և ազգի թշնամիները, երբ օտարներու միջամտութիւնը հրաւիրելու համար պատրուակ ուզեն ստեղծել, նրանց գրգռումի տեղի չտալու համար՝ պէտք է որ մենք շրջահայեաց լինենք և պատրաստ գտնուինք, հետեւաբար մեր երկրի մէջ գրտնրուող օտարականների իրաւունքին չպէտք է դիպչենք և օսմանեան կազմակերպութեան դէմ ըմբոստ չգտնուող ու չարամտութիւն չունեցող մեր քրիստոնեայ հայրենակիցներին պաշտպան պիտի լինենք և այդ առթիւ եթէ հարկ տեսնուի, նոյն իսկ բերանացի և գրաւոր ապահովութիւններ պէտք է տալ նրանց հոգևոր պետերին և զեսպաններին:
- գ) Բոլոր օսմանցիներս քրիստոնեայ և ոչ—քրիստոնեայ պէտք է աշխատինք որ 1293-ի հաստատուած «Կանոնը Էսասին» վերահաստատենք:
- դ) Դժողովոգեան հիմնական իրաւունքները ապահովութեան տակ առնելը ամենից աւելի երկրի աւագանիների (քաղաքական, զինուորական, կրօնական) պարտականութիւնն է: Եթէ պաշտօնական երզման արարողութեան ժամանակ այդ պարտականութիւնը չկատարեն՝ պատասխանատու են:

Ո՛վ ո՛չ մահաբեկաններ, մենք ձեզ հայրենակիցներ ենք ճանաչում, և որ և է իր սուլթանի մէջ խտրութիւն չենք գնում, համիրական կառավարութեան ձեռքի և մեզի արած գէշութիւնները կուզենք միացած դարմանել. եկէք ազատութեան համար միասին աշխատինք. եթէ մեջերսի բոտարների ծախուածներ և իրենց շահերի համար ձեր հիմնական շահը վտանգողներ կան, որոնք ցնորական և երեսակոյական բառերով ձեզ սխալացնում են՝ նրանց մոլորութիւններին ահանջ մի՛ կախէք, նոյն իսկ այդպիսիներին պատժեցէք: Երջանկութիւն, արդարութիւն, ազատութիւն եթէ կուզէք, մեզի միացէք: Մենք մարդկային իրաւունքները միայն միւսլիմանների համար չէ, այլ մեր ամբողջ հայրենակիցների համար է, որ կը պահաջենք:

Ո՛վ միւսլիմաններ, այժմ պետութիւնը և ազգը մահուան և կենաց օրերի մէջ է գտնուում, կա՛մ բնաջնջուել կա՛մ ազատուել հարկ է, սրանցից մէկն ու մէկը մեր բուն լիք դիրքից կախումն ունի: Մեր նախահայրերից մնացած այս հայրենիքը ներքին և արտաքին թշնամիների մէջն է մնացած:

Ո՛վ ընդհանուր հայրենակիցներ, միասնաբար, այս վերջին պատահելութիւնը չփոխցնենք, մարդի պէս ապրենք կամ քաջաբար մեռնենք:

ՊՈՎԻՏ ԼՕԷՆԼՕԻ ՅԻՇԱՏԱԿԱԳՐԻՑ

— Գերմանական կայսրութեան երրորդ կանցլերի՝ Իշխան Կրօվիս Լօհէնյօի յիշատակագրի հրատարակութիւնը բաւականին մեծ իրարանցում բերեց միջազգային քաղաքական մամուլի մէջ: Անկասկած է, որ այդ յիշատակագիրը մեծ տեղ պիտի բռնի ժամանակակից քաղաքական գրականութեան մէջ:

Մենք տալիս ենք այդ յիշատակագրի միայն այն մի քանի կտորները, որո՛ք կապակցութիւն ունեն Արևելեան Խնդրի հետ:

— 7 նոյեմբեր, 1882.— Բիսմարկը յայտարարեց. «Եթէ Ֆրանսիացիները ցանկանում են որ անգլիացիները իրենց ազատ թողնեն Սիւրիայի մէջ դա մեղ համար ո՛չ մի նշանակութիւն ունի, թող Ֆրանսիացիները անեն՝ ինչոր կուզեն, միայն թէ Ռէյնից հեռու մնան»:

— 27 հոկտեմբեր, 1883.— Իշխան Բիսմարկ Ֆրիզլըրշուհէում ինձ պատմեց, որ մօտերս Մուխտար փաշան նրան այցելութեան էր գնացել. խնդրելու համար, որ նա իր ազգեցութիւնը գործ դնէր բրիտանական ստնձգութիւնների դէմ թիւրքիսլոմ: Բիսմարկը մերժեց միջամտել և Մուխտար փաշային խորհուրդ տուեց, որ Եգիպտոսի համար դիմեն Ֆրանսիային, իսկ Բուլղարիայի նկատմամբ Թիւրքիան ինքն էր որ իր գլխի ճարը պիտի տեսնէր, և ինչոր վերերում է այն բանին, որ Անգլիացիները իրենց ձանձրացնում են Հայաստանի նկատմամբ, ինքը ոչինչ չունէր ասելիք. եթէ ո՛չ այն, որ հարկաւոր էր նրանց գլխից ռադ անել: Բիսմարկը նոյն իսկ մի այնպիսի ա-

ւելի կօպիտ արտայայտութիւն արեց, որ Մուխտար փոշան զարմացած մնաց:

Այդ ստիժի գլազատանի մասին խօսելով՝ Բիսմարկը ասաց որ նա մեծ հոնտոր էր, բայց սահմանափակ քաղաքագետ:

— 5 սեպտեմբեր 1877. — Բիսմարկի ծրագրին է այնպէս անել, որ Արգենտինա և Ռուսիան Արեւելքում իրարու հետ համաձայնեն ի վաս թիւրքիայի: Կանցլերը ուզում է ֆրանսիացիներին դուրս թողնել բարձր քաղաքականութեան բոլոր բաղկացութիւններից:

— Գերմանիա և Ռուսիա. — Ես պատմեցի Կապրիլին, որ Շուվալովը նրան անուանել էր «մի սգիւ մարդ»։ Նա պատասխանեց. «Դա յատուցումով է նրանից, որ Բիսմարկը Ռուսիայի հետ մի գաշնադրութիւն էր կապել, որով մենք պարտաւորուած էինք նրան ազատ թողնել Բուլղարիայում և Կ. Պոլսում, և որով Ռուսիան պարտաւորուած էր չէզոք մնալ, եթէ Գերմանիան պատերազմի դուրս գար Ֆրանսիայի դէմ»:

Այս գաշնադրութիւնը վերջ գտաւ երբ Կապրիլին նախարար դարձաւ. նա չվերանորոգուեց, որով հետեւ եթէ նրանից տեղեկութիւն ունեցած լինէին, եռապետական գաշնակցութիւնը կհարտակուէր:

Կասկածում եմ որ Աւստրիան երախտագէտ գանուի դէպի մեզ:

— 2օհտոբրի և ուս կայսեր միջև հեռուեալ խօսակցութիւնն է տեղի ունեցել Բրեսլաուի մէջ, սեպտեմբեր 7ին - 1896. — Ցարը գոհունակութեամբ հաստատեց, որ զրուցիւնը Արեւելքում խաղաղում էր Անկարգութիւնները զազարել էին Պոլսում և Յունաստանը հանգարտել: Նորին մեծութիւնը կրճում էր, որ շարժումների ամբողջ պատասխանատուութիւնը թէ՛ Հայաստանում և թէ՛ Կրէտէում, ընկնում էր Բեռլին Բրիտանիայի վրայ, և նա աւելացրեց. — Ես շատ եմ սիրում Անգլիան և անգղիացիներին, ես նրանց համակրում եմ, բայց կասկածում նրանց քաղաքականութիւնից»:

**Ն Ի Ի Բ Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ**

**ԻՐԳԱՍՏԱՆ-ԲԱԼԷՆՈՎԻՏ Մ-ըի գանձարանում ստացուել են մարտ 21-ից մինչև յուլ 15 1905 (Շարունակ. «Հնչակի» 1905 տարուայ 9-10 թի հց.)**

Անուսիկ Զէյթուն գիւղից շրջիկ գործակալի միջոցաւ, ընկերներից նախկին նուիրատուութիւն 4 ր. 25 Կ. նոր կազմակերպութեամբ ընկերներից 15 ր. 20 Կ., նուիրել են՝ Վարդ, Լուսաբեր Կեօկէոճին, Ճգնաւոր, Սարէն, Փէալիվան, Բարեբաղչ. Սրտոտ 1. ական ր., Անհանգիստ 50 Կ., Պարոյր 3 ր., Մնացական 20 Կ., Վահրէճ 1 ր. 50 Կ., Սկրտիչ 2 ր.: Արտակարգ մուտք. — Խմբագրատից նուէր 1 ր., տասնապետից 50 Կ., մի գատից 1 ր., սուգանք 1 ր. 50 Կ., սուգանք 4 հոգուց 60 ր.: Պայծառ Բալահոյի գիւղից 14 ր. 55 Կ., նուիրել են՝ Արտաշէս Սար Բանալի Լոյս, Լեռ, Կրակոտ, 1-ական ր. Գեա, Զատիկ, Բարեկէն, Պահար, Թիւրի-ժոյ, Սարէլ, Աշոտ, Աշաւ, Աշխոյժ, Արագ 8օրակ Արիւժ, Սեղան 50-ական Կ. Զար 35 Կ., Հսկայացած, Սառոց Նոր-Գեա Զէրան, Միտիմար, 30-ական կօպ: Վաջ Սասուն գիւղից 24 ր. 50 Կ. նուիրել են՝ Սպիրիտոս Պալատիներն, 20 ր. Ռօրի 3 ր., Ժիրայր 50 Կ., Յոսիկ 1 ր.: «Ռուսիան» խմբից 3 ր.: Սասուն գիւղից 25օրակ, Սիւսի, Յարակ, Արտաշէս 1-ական ր. Վարդիկ 30 Կ.: «Արարտ» խմբից 15 ր. 4 Կ.: «Մասիս» խմբից 13 ր.: Մասիս գիւղից 32 ր. 70 Կ.: նուիրել են՝ Գարեհ, Սրտոտ, Հեռօտես 1 ական ր.: «Արշակունեան» խմբից 29 ր. 20 Կ.: Բարաշէն գիւղից 10 ր. նուիրել են՝ Մակարոֆ, Սեպուհ, Զգն 50-ական Կ. 6 րնկ. ապառիկներից 8 ր. 50 Կ., Զէյթուն գիւղի «Արշակունեան» խմբից 8 ր. 95 Կ., ընկեր Խ-ից սուգանք 5 ր.: Ը՛ղհ. գումար 411 ր. 25 Կ.:

ԲՈՒՀԻՐԱՆԻ Մասնաձիւղի գանձարանում 1905-ի սկզբից մինչև 1906 մայիս 20 ստացուել են հետեւեալ գումարները. —

Շանթից 12 դն., Մ-ից 20 դն., պատկերի փող 31 դն., շուրից անդամաւժ. 20 դն., Կայծակից անդմ. 20 դն., նոյնից «Հնչակի» քաժ 10 դն., նոյնից «Արարտուիտեան» քաժ, 27 դն., անդամաւժարներ խմբից 603 դն., 25 ր., Վրէժից 200 դն., անդամաւժարներ խմբից 380 դն., Բարեկէն անդամաւժարներ խմբից 100 դն., Վրէժից 60 դն., Անհից 40 դն., Սեւորուց 40 դն., Կոռնիկից 20 դն., Արամուրից 5 40 դն., «Արշիւ» խմբից 26 դն., «Տիրայր» խմբից 50 դն., Ն. Յ. 500 դն., Ն. Յ. 500 դն., նոյնից 250 դն., Կովկասից 500 դն., Կարնու, Ն. Յ. 500 դն., նոյնից 250 դն., նոյնից (ընկեր Մուրին 250 դն., ազատման տոթիւ) 200 դն., Կոռնիկ 250 դն., Զալալ 200 դն., Ա. . . Կանց 200 դն., Պատիժ 168 դն., Յ. Մ. 150 դն., Յ. Փ. 200 դն., Պ. Յ. 200 դն., Կրիկի 200 դն., Մեղրի 200 դն., Յ. Մ. 200 դն., Տ. Յ. 100 դն., Ն. Ն. 110 դն., Յ. Յ. 100 դն. մնւ՛ 130 դն., Տ. խ. 30 դն., Տ. Մ. 20 դն., Մ. Ս. 20 .. դն. 9 մր. 6908 դն., 25 սանտ.

Ընկեր Մուրատի ազատման տոթիւ հանդամակուած Բարեկէ 250 դն., Արարտուժ. Ղէկ, Գ. Խ. Գ. 200-ական դն., Վեհ 150 դն., Ս. Մ. Գ. 300 դն., Ս. Խ. Գ. 456 դն., Սեւորուց 50 դն. 9 մր. 1806 դն.: Ընդհ. գմր. 8714 դն., 25 սանտ.

**Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ե Ի**

**Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ**  
Թարգմանութեամբ  
**Կ. ԿԱՌԵՅՎՈՒ**

**ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՆՐԳԸ**

Լըֆուրտի Ծրագրի բացատրութեան երկրորդ գրքիչը: Գինն է 30 սանտիմ

ԿԵԳՐՈՒԱԿԱՆ Գանձարանում ստացուել են հետեւեալ գումարները. —

Ընկեր Մուրատի ձեռամբ (ի նպատ քաղաքական քանկերից), 505 ֆ. 55 ս. ԱՍՅՐ. ԳՈՐԾ. ՅԱՆՁ. Ըն ընկ. Անդր-Կան ձեռ. 24 տողար իՍՏ. ՍՆՆՏ ԼՈՒԻՉ Մ. Գ. Ըն 20 անգլոսիկ 100 րպի. ԲՏՄ՝ Մ. Գ. Ըն 500 " ՓԱՐՈՍՍ Մ. Գ. Ըն 2000 "

M. BELLART — 7, Rue Campagne-Première 7, (France) PARIS.  
Imprimeur-Gérant Gabriel FARJAT